2026
Հունվար

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Սի քեփիթալ ընդ ինվեսթմենթս» ՍՊԸ-ն, «ԷՅ ԴԻ Ի ԻՔՍ» ՓԲԸ-ն գրանցելու և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին 6

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Իսակով» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին 6

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱԷՍ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ «Ծաղկաձոր», «Արդշինբանկ» ԲԲԸ «Տ5» մասնաճյուղերը գրանցելու մասին 6

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 220-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող կազմակերպություններից տեղեկատվության հարցման, արգելանքներ կիրառելու, դրամական միջոցների և եկամուտների վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ հաղորդագրությունների ձևերը, դրանց կիրառման, համապատասխան փաստաթղթաշրջանառության կարգը և ժամկետները, լիցենզավորվող կազմակերպությունների կողմից դրամական միջոցների վրա արգելանք դնելու և բռնագանձում տարածելու հերթականությունը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 7

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 226-Ն որոշումը ««Կրիպտոակտիվների առաջարկի փաստաթղթի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, առաջարկի փաստաթուղթը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը» կանոնակարգ 7/04-ը սահմանելու մասին» 8

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 227-Ն որոշումը ««Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը» կանոնակարգ 7/01-ը սահմանելու մասին» 18

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 228-Ն որոշումը ««Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող ու հաշվարկից նվազեցվող տարրերը» կանոնակարգ 7/02-ը սահմանելու մասին» .. 101

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 229-Ն որոշումը ««Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց մասնաճյուղերի ղեկավարների գրանցման կարգը» կանոնակարգ 7/05-ը սահմանելու մասին» 109

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 230-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» .. 126

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 3-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ... 127

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 6-Ն որոշումը «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը, տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 263-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 140

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 11-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» .141

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 12-Ն որոշումը ««Կրիպտոակտիվներով կնքված գործարքների վերաբերյալ գրանցումների կամ գրառումների կատարման, պահպանման (արխիվացման) և դրանց բովանդակության նկատմամբ պահանջները, ինչպես նաև դրանք Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը» սահմանելու մասին» 143

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 13-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2025 թվականի չորրորդ եռամսյակ)» 145

Վիճակագրական ամփոփագիր 146

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել և ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա է տրամադրվել*** «Սի քեփիթալ ընդ ինվեսթմենթս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, «ԷՅ ԴԻ Ի ԻՔՍ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշումներ թիվ 1Ա, 2Ա):

- ***Թույլատրվել է*** «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «Իսակով» մասնաճյուղի ***գործունեության դադարեցումը*** (որոշում թիվ 1/30Ա):

- ***Գրանցվել են*** «ԱԷՍ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Ծաղկաձոր», «Արդշինբանկ» բաց բաժնետիրական ընկերության «T5» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/42Ա, 1/45Ա):

30 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 220-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող կազմակերպություններից տեղեկատվության հարցման, արգելանքներ կիրառելու, դրամական միջոցների և եկամուտների վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ հաղորդագրությունների ձևերը, դրանց կիրառման, համապատասխան փաստաթղթաշրջանառության կարգը և ժամկետները, լիցենզավորվող կազմակերպությունների կողմից դրամական միջոցների վրա արգելանք դնելու և բռնագանձում տարածելու հերթականությունը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին *

Հիմք ընդունելով «Կատարողական վարույթի մասին» օրենքի 66-րդ հոդվածի 4-րդ մասը, 87-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող կազմակերպություններից տեղեկատվության հարցման, արգելանքներ կիրառելու, դրամական միջոցների և եկամուտների վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ հաղորդագրությունների ձևերը, դրանց կիրառման, համապատասխան փաստաթղթաշրջանառության կարգը և ժամկետները, լիցենզավորվող կազմակերպությունների կողմից դրամական միջոցների վրա արգելանք դնելու և բռնագանձում տարածելու հերթականությունը սահմանելու մասին կարգը»՝ (այսուհետ՝ Կարգ) համաձայն սույն որոշման Հավելվածի 1-ի:
2. Հաստատել Կարգով սահմանված հաղորդագրությունների ձևերում լրացվող նվազագույն տեղեկատվության հետ կապված պահանջները՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի ««Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը» սահմանելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 520-ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 104-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ էլեկտրոնային փողի հաշվառման հաշվին (էլեկտրոնային դրամապանակին) վերաբերող կարգավորումներից, որոնք ուժի մեջ են մտնում 2026 թվականի մարտի 2-ից:
5. Սույն որոշման Հավելված 1-ի 4-րդ կետով սահմանված թիվ 6, 7, 8, 9 հաղորդագրության ձևերը կիրառվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելուց 9 ամիս հետո: (Հավելվածները տե՛ս հետևյալ հղմամբ՝ **Հավելված 1** - https://www.cba.am/file_manager/Decision-Appendix/2025/Appendix1_220N_30.12.2025_arm.pdf , **Հավելված 2** - https://www.cba.am/file_manager/Decision-Appendix/2025/Appendix2_220N_30.12.2025_arm.pdf):

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. դեկտեմբերի 30-ին (ՀՀԳՏ, 07.01.2026):

30 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 226-Ն

«Կրիպտոակտիվների առաջարկի փաստաթղթի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, առաջարկի փաստաթուղթը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը» կանոնակարգ 7/04-ը սահմանելու մասին *

Նպատակ ունենալով սահմանել կրիպտոակտիվների առաջարկի փաստաթղթի ձևն ու բովանդակությունը, ինչպես նաև առաջարկի փաստաթղթի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացման կարգը,

հիմք ընդունելով «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, 8-րդ հոդվածի 1-ին մասը, 9-րդ հոդվածի 4-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել «Կրիպտոակտիվների առաջարկի փաստաթղթի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, առաջարկի փաստաթուղթը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը» կանոնակարգ 7/04-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. դեկտեմբերի 30-ին (ՀՀԳՏ, 21.01.2026):

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 226-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 7/04

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՎԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Գ Լ ՈՒ Խ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
   1) առաջարկի փաստաթղթի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ կախված առաջարկվող կրիպտոակտիվների տեսակներից,
   2) առաջարկի փաստաթուղթը, առաջարկի թարմացված փաստաթուղթը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը:
2. Առաջարկի փաստաթղթի հրապարակման պահանջը չի տարածվում կրիպտոակտիվների այն հրապարակային առաջարկների վրա, երբ առաջարկվող կրիպտոակտիվների ընդհանուր արժեքը թողարկման կամ վաճառքի գնով 12 ամսվա ընթացքում (առաջարկի հրապարակման օրվանից) չի գերազանցում 20 միլիոն ՀՀ դրամը:
3. Թողարկողը կամ կրիպտոակտիվների՝ առևտրային հարթակում առևտրին թույլտվություն հայցող անձը կամ «Կրիպտոակտիվների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում հարթակի օպերատորը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկատվությունից բացի կարող են առաջարկի փաստաթղթում ներառել նաև այլ տեղեկատվություն:
4. Օտարերկրյա թողարկողի կողմից թողարկված կրիպտոակտիվի՝ որի համար արդեն իսկ հրապարակված է առաջարկի փաստաթուղթ, Հայաստանի Հանրապետության տարածքում հրապարակային առաջարկ անելու կամ առևտրային հարթակում առևտրին թույլատվություն հայցելու նպատակով կազմված առաջարկի փաստաթղթի վրա տարածվում են միայն սույն կանոնակարգի 8-րդ գլխի պահանջները:
5. Եթե առաջարկի փաստաթուղթը պարունակում է հղումներ, ապա առաջարկի փաստաթուղթը հրապարակած անձը պարտավոր է ապահովել դրանց արդիականությունը՝ փոփոխությունների դեպքում թարմացնելով առաջարկի փաստաթուղթը:

Գ Լ ՈՒ Խ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
   1) **«Խումբ»՝** Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ.

2) **«Երաշխավորված տեղաբաշխում»՝** տեղաբաշխում, որով տեղաբաշխողը պարտավորվում է սահմանված ժամանակահատվածում գնել և վաճառել թողարկված կրիպտոակտիվների ամբողջ ծավալը կամ ստանձնում է չվաճառված կրիպտոակտիվների գնման ֆինանսական պարտավորությունը.
3) **«Ռիսկային գործոններ»՝** այն ռիսկերի ցանկը, որոնք հատուկ են թողարկողին, կրիպտոակտիվին, կրիպտոակտիվի նախագծին կամ կրիպտոակտիվի հիմքում ընկած **տեխնոլոգիային** և որոնք ողջամիտ ձեռքբերողը կկարևորեր ձեռքբերման որոշումներ կայացնելիս.
4) **«Բաժանորդագրություն»՝** դեռևս չթողարկված կրիպտոակտիվ ձեռք բերելու հայտ.
5) **«Բաժանորդագրվող»՝** դեռևս չթողարկված կրիպտոակտիվ ձեռք բերելու հայտ ներկայացրած անձ.
6) **«Կրիպտոակտիվի նախագիծ»՝** նախագիծը որի շրջանակում տեղի է ունենում կրիպտոակտիվի թողարկումը:

7. Սույն կարգում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Օրենքով սահմանված իմաստով:

Գ Լ ՈՒ Խ 3
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. Սույն կանոնակարգով սահմանված առաջարկի փաստաթուղթը Կենտրոնական բանկ է ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ secretariat@cba.am էլեկտրոնային փոստի միջոցով կամ էլեկտրոնային կրիչով, իսկ Սի-Բի-Էյ-նեթ համակարգին հասանելիություն ունենալու դեպքում՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով՝ «Փի-Դի-Էֆ» ֆորմատով:
9. Առաջարկի փաստաթղթի փոփոխված կամ լրացումներով տարբերակը, ինչպես նաև Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ներկայացվող առաջարկի թարմացված փաստաթուղթը Կենտրոնական բանկ ներկայացնելիս, ներկայացվում է.
    1) առաջարկի փաստաթղթի վերջնական տարբերակը, որը ներառում է՝ փոփոխությունները, լրացումները և թարմացումները,
    2) առաջարկի փաստաթղթի վերջին հրապարակված օրինակը, որը ներառում է առաջարկվող փոփոխությունները և լրացումները՝ խմբագրման ռեժիմով,
    3) առաջարկի փաստաթղթի թարմացումների իրականացման հիմնավորումները՝ առաջարկի փաստաթուղթը Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն թարմացնելու դեպքում:

Գ Լ ՈՒ Խ 4
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՎԸ ԵՎ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10. Կրիպտոակտիվի առաջարկի փաստաթուղթը կազմված է հետևյալ մասերից.
    1) Դիմային էջ,
    2) «Բովանդակություն»,
    3) «Պատասխանատու անձինք»,
    4) Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխանող ամփոփաթերթ,
    5) «Կրիպտոակտիվի թողարկողը»,
    6) «Հրապարակային առաջարկ իրականացնող անձ» կամ «Առևտրին թույլտվություն հայցող անձը», եթե թողարկողը և հրապարակային առաջարկ իրականացնող անձը կամ առևտրի հարթակում առևտրին թույլտվություն հայցող անձը տարբեր անձինք են,

7) «Կրիպտոակտիվ և կրիպտոակտիվի նախագիծ»,
8) «Կրիպտոակտիվի հրապարակային առաջարկը» կամ «Առևտրային հարթակում կրիպտոակտիվի առևտրին թույլտվության հայցը»,
9) «Ռիսկային գործոններ»,
10) «Պահուստային ակտիվներ», եթե առաջարկի փաստաթուղթը ներկայացվում է ակտիվին կցված թոքեն հանդիսացող կրիպտոակտիվի համար՝ բացառությամբ էլեկտրոնային փողի թոքենների:

11. Դիմային էջը առնվազն ներառում է.
1) կրիպտոակտիվի անվանումը և տեսակը,
2) «ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ-ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ» կամ «ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ-ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ» բառերը,
3) առաջարկի փաստաթուղթը հրապարակող անձի անվանումը,
4) առկայության դեպքում՝ կրիպտոակտիվի գլխավոր տեղաբաշխողի անվանումը,
5) աչքի ընկնող ձևաչափով հայտարարություն հետևյալ բովանդակությամբ. «ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՉԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ:»,
6) Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հայտարարությունները:

12. «Բովանդակություն» մասը պետք է պարզ և մատչելի ձևով արտացոլի առաջարկի փաստաթղթի բովանդակությունը:

13. «Պատասխանատու անձինք» մասում ներկայացվում են.
1) պատասխանատու անձանց անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը: Սույն կետի իմաստով պատասխանատուն անձինք են **առաջարկի փաստաթուղթը կազմող և հրապարակող անձի գործադիր մարմնի բոլոր անդամները, խորհուրդ ձևավորելու դեպքում՝** տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամների մեծամասնությունը: Եթե որևէ անձ պատասխանատու է առաջարկի փաստաթղթի միայն որոշակի մասերի համար, ապա պետք է նշում կատարվի այդ մասին,
2) դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք կրիպտոակտիվի առաջարկի փաստաթղթում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն առաջարկի փաստաթղթում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել առաջարկի փաստաթղթի բովանդակությունը»:

14. «Կրիպտոակտիվի թողարկողը» մասում առնվազն ներառվում է.
1) անվանումը,
2) կազմակերպական-իրավական ձևը,
3) պետական գրանցման հասցեն և համարը,
4) կազմակերպության գրանցման ամսաթիվը,
5) կազմակերպության գտնվելու վայրը, այն երկրի օրենսդրությունը, որի ներքո թողարկողը գործունեություն է ծավալում, թողարկողի հիմնադրման երկիրը, կանոնադրությամբ նշված գտնվելու վայրը, փաստացի գործունեություն ծավալելու վայրը, եթե տարբերվում է կանոնադրությամբ նշված գտնվելու վայրից,
6) կազմակերպության կապի միջոցները՝ հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքը,

7) խմբի անդամ լինելու դեպքում՝ խմբի կառուցվածքը՝ սխեմատիկորեն և կազմակերպության տեղը այդ խմբում,
8) կազմակերպության գործառույթների և հիմնական գործունեության նկարագիրը: Խմբի անդամ լինելու դեպքում, նաև մայր կազմակերպության գործառույթների և հիմնական գործունեության նկարագիրը):

15. «Հրապարակային առաջարկ իրականացնող անձը» կամ «Առևտրին թույլտվություն հայցող անձը» մասում ներառվում է սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված տեղեկությունները: Եթե առևտրին թույլտվություն հայցող անձը հարթակի օպերատոր է, ապա կարող է ներկայացվել միայն սույն կանոնակարգի 14-րդ կետի 1-ին, 2-րդ, 6-րդ և 8-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները:

16. «Կրիպտոակտիվ և կրիպտոակտիվի նախագիծ» մասում առնվազն ներառվում է.

1) կրիպտոակտիվի անվանումը և տարբերակիչ ծածկագիրը,
2) կրիպտոակտիվի նախագծի անվանումը և նախագծի նկարագրությունը,
3) երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվել է տվյալ կրիպտոակտիվը,
4) կրիպտոակտիվի բնութագիրը և ֆունկցիոնալության նկարագրությունը,
5) կրիպտոակտիվի նախագծի իրագործման գործընթացում ներգրավված և էական դերակատարություն ունեցող անձանց անվանումները և դերը,
6) կիրառելիության դեպքում՝ տեղեկատվություն կրիպտոակտիվի հետ կապված հետագա պլանների վերաբերյալ: Ներառվում է նաև արդեն իսկ տեղի ունեցած և պլանավորվող կարևոր իրադարձությունների նկարագրությունը,
7) կրիպտոակտիվին կցված իրավունքները և պարտավորությունները, ներառյալ.
   ա. կրիպտոակտիվից բխող իրավունքների և պարտավորությունների նկարագրությունը, ներառյալ՝ իրավունքների սահմանափակումները և այդ իրավունքների իրականացման գործընթացը,
   բ. սեփականատերերի տարբեր խմբերին տարբեր իրավունքներ կցված լինելու դեպքում՝ տարբերությունների պատճառաբանությունը,
   գ. այն պայմանների նկարագրությունը, որոնց առկայության դեպքում կրիպտոակտիվին կցված իրավունքները և պարտավորությունները կարող են փոխվել,
   դ. կիրառելիության դեպքում՝ տեղեկատվություն թողարկողի կողմից կրիպտոակտիվների հետագա հրապարակային առաջարկի վերաբերյալ, ինչպես նաև թողարկողի կողմից հետ գնված և չմարված կրիպտոակտիվների քանակը,
   ե. որտեղ և ինչպես կարող են կրիպտոակտիվները ձեռք բերվել կամ վաճառվել հրապարակային առաջարկից հետո, եթե առևտրին թույլտվություն չի հայցվում,
   զ. հրապարակային առաջարկվող կամ առևտրին թույլտվության ենթակա կրիպտոակտիվների փոխանցելիության առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ,
   է. այն դեպքում, երբ կրիպտոակտիվի առաջարկը փոփոխվում է սահմանված ընթացակարգի համաձայն՝ կախված պահանջարկի տատանումների հետ, ապա ներկայացվում է տվյալ ընթացակարգի նկարագրությունը,
   ը. կիրառելիության դեպքում՝ կրիպտոակտիվի արժեքը պաշտպանող սխեմաների և փոխհատուցման սխեմաների նկարագրությունը կամ հայտարարություն՝ դրանց բացակայության վերաբերյալ,
8) կրիպտոակտիվի հիմքում ընկած տեխնոլոգիաները, ներառյալ.
   ա. ներդրված տեխնոլոգիաների մասին տեղեկատվություն, ներառյալ՝ ապակենտրոնացված գրանցամատյանի, ծրագրային ապահովումների ընթացակարգերի (պրոտոկոլների) և տեխնիկական ստանդարտների մասին տեղեկատվություն, կիրառելիության դեպքում՝ թողարկողի կողմից գործարկված սմարթ պայմանագրերի հասցեները: Ընդ որում, եթե կրիպտոակտիվը թողարկվել, փոխանցվում կամ պահպանվում է թողարկողի կամ նրա հետ փոխկապակցված անձի կողմից կառավարվող ապակենտրոնացված գրանցամատյանում, ապա նշում՝ փոխկապակցվածության վերաբերյալ,
   բ. ապակենտրոնացված գրանցամատյանը որևէ անձի կողմից կառավարվելու դեպքում՝ ապակենտրոնացված գրանցամատյանը կառավարելու իրավասությունների նկարագրությունը,
   գ. կիրառելիության դեպքում՝ կիրառված փոխհամաձայնության մեխանիզմը,

դ. ապակենտրոնացված գրանցամատյանում գործարքների կատարումը ապահովելու նպատակով ներդրված խթանող մեխանիզմները և կիրառելի վճարները,

ե. ներդրված տեխնոլոգիայի աուդիտ իրականացնելու դեպքում՝ աուդիտի եզրակացության վերաբերյալ տեղեկատվություն կամ հայտարարություն՝ տեխնոլոգիայի աուդիտ իրականացրած չլինելու վերաբերյալ:

17. «Կրիպտոակտիվի հրապարակային առաջարկ» կամ «Առևտրային հարթակում կրիպտոակտիվի առևտրին թույլտվության հայց» մասում առնվազն ներառվում է.

1) առկայության դեպքում՝ հրապարակային առաջարկի կամ առևտրային հարթակում առևտրին թույլտվության ենթակա կրիպտոակտիվների քանակը, թողարկողի հիմնադիրների, աշխատակիցների կողմից կրիպտոակտիվների ձեռք բերման ժամանակացույցը և պայմանները (նման հնարավորություն նախատեսված լինելու դեպքում),
2) հրապարակային առաջարկի համար վերջնաժամկետ սահմանված լինելու դեպքում՝ բաժանորդագրման իրականացման սկիզբը և ավարտը, ներառյալ՝ ժամկետների ցանկացած հնարավոր փոփոխությունները,
3) հրապարակային առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի մանրամասն նկարագրությունը, մասնավորապես՝ նկարագրվում է, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկի այն անձը, որը որոշել է ընդունել առաջարկը և ձեռք բերել կրիպտոակտիվները,
4) այն հանգամանքները, որոնց դեպքում հրապարակային առաջարկը կարող է հետաձգվել կամ չեղյալ համարվել: Ներկայացվում է նաև, թե արդյո՞ք հրապարակային առաջարկը կարող է չեղյալ համարվել, եթե արդեն կատարվել են գործարքներ, ինչպես նաև՝ առաջարկը չեղյալ համարելու դեպքում կրիպտոակտիվները ձեռք բերած անձանց միջոցները վերադարձնելու կարգը,
5) առկայության դեպքում՝ բաժանորդագրությունների նվազագույն և առավելագույն շեմերը, գերբաժանորդագրություններ ընդունելու դեպքում՝ գերբաժանորդագրությունների հատկացման (բաշխման) գործընթացը և բաժանորդագրված անձանց կողմից վճարված գումարները վերադարձնելու կարգը,
6) կրիպտոակտիվի առաջարկի գինը՝ արտահայտված ՀՀ դրամով (այլ կրիպտոակտիվներ հավաքագրելու դեպքում՝ համապատասխան կրիպտոակտիվով): Եթե գինը հայտնի չէ, ապա նշվում է գնի որոշման մեթոդը կամ պայմանները, ինչպես նաև առաջարկի գնի բացահայտման գործընթացի նկարագրությունը: Ներկայացվում են նաև այն ծախսերը, որոնք գանձվելու են բաժանորդագրվող անձից կամ գնորդից,
7) ներդրողների այն խմբերը, որոնց ուղղված է առաջարկը (հանրության, որակավորված ներդրողներին, ինստիտուցիոնալ ներդրողներին և այլն), առկայության դեպքում՝ նաև ներդրողների խմբերի համար գործող սահմանափակումները,
8) բաժանորդագրություններ ընդունելու դեպքում՝ հստակ դրույթ այն մասին, որ հրապարակային առաջարկին բաժանորդագրված անձինք կփոխհատուցվեն հետևյալ դեպքերում.

ա. եթե բաժանորդագրված անձինք օգտվում են Օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կրիպտոակտիվների ձեռքբերման պայմանագրից հրաժարվելու իրավունքից,

բ. եթե հրապարակային առաջարկը չեղարկվել է,

9) բաժանորդագրություններ ընդունելու դեպքում՝ սույն կետի 8-րդ ենթակետում նշված փոխհատուցման գործընթացի նկարագրությունը և ժամկետները,
10) առկայության դեպքում՝ տեղեկատվություն վաղ բաժանորդագրության համար գործող զեղչերի վերաբերյալ: Հատուկ ներդրողների խմբերի համար գործող զեղչերի առկայության դեպքում՝ ներկայացվում է հատուկ զեղչեր տրամադրելու պատճառաբանությունը,
11) կիրառելիության դեպքում՝ Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ընթացակարգերի նկարագրությունը,

12) կրիպտոակտիվների դիմաց վճարումներ կատարելու հնարավոր եղանակները, ինչպես նաև՝ վճարված միջոցների հետվերադարձի կամ մարման եղանակները՝ հետվերադարձի կամ մարման հնարավորության առկայության դեպքում,
13) կիրառելիության դեպքում՝ տեղեկատվություն Օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կրիպտոակտիվների ձեռքբերման պայմանագրից հրաժարվելու իրավունքի վերաբերյալ,
14) ձեռք բերած կրիպտոակտիվները ստանալու մեթոդները և ժամկետները,
15) տեղեկատվություն տեխնիկական պահանջների վերաբերյալ, որոնց կրիպտոակտիվ ձեռք բերող անձը պետք է բավարարի կրիպտոակտիվները պահպանելու համար,
16) կիրառելիության դեպքում՝ տեղաբաշխողի անվանումը և տեղաբաշխման տեսակը (երաշխավորված տեղաբաշխում է թե ոչ),
17) կիրառելիության դեպքում՝ առևտրային հարթակի անվանումը, որտեղ առևտրին թույլտվություն է հայցվում և տեղեկատվություն տվյալ առևտրային հարթակին ներդրողների հասանելիության և հարթակից օգտվելու հետ կապված ծախսերի վերաբերյալ,
18) հրապարակային առաջարկի կամ առևտրին թույլտվության հայցման մեջ ներգրավված անձանց շահերի հնարավոր բախումները՝ հրապարակային առաջարկի կամ առևտրին թույլտվության հայցման հետ կապված:

18. «Ռիսկային գործոններ» մասում առնվազն ներկայացվում է.
1) այն ռիսկային գործոնները և դրանց բնութագրերը, որոնք հատուկ են թողարկողին և նրա գործունեության ոլորտներին,
2) այն ռիսկային գործոնները և դրանց բնութագրերը, որոնք հատուկ են առաջարկվող կամ առևտրին թույլատրվող կրիպտոակտիվին,
3) այն ռիսկային գործոնները և դրանց բնութագրերը, որոնք կապված են կրիպտոակտիվի նախագծի գործարկման հետ,
4) այն ռիսկային գործոնները և դրանց բնութագրերը, որոնք հատուկ են կրիպտոակտիվի հիմքում ընկած տեխնոլոգիային, ինչպես նաև ռիսկերի գործոնները զսպելու մեխանիզմները՝ առկայության դեպքում:

Գ Լ ՈՒ Խ 5
ԱԿՏԻՎԻՆ ԿՑՎԱԾ ԹՈՔԵՆ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

19. Ակտիվին կցված թոքեն, ներառյալ՝ էլեկտրոնային փողի թոքեն, չհանդիսացող կրիպտոակտիվի առաջարկի փաստաթուղթը, սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված տեղեկություններից բացի, ներառում է սույն գլխով սահմանված տեղեկատվությունը:

20. «Կրիպտոակտիվի թողարկողը» մասում, սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի, ներկայացվում է նաև ֆինանսական վիճակի մասին վերլուծություն՝ գործունեության վերջին երեք տարիների համար (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած անձինք ֆինանսական վիճակի մասին վերլուծությունը ներկայացնում են գործունեության ողջ ժամկետի համար): Ֆինանսական վիճակի մասին վերլուծությունը ներառում է հիմնական ֆինանսական ցուցանիշների և դրանց էական փոփոխությունների վերլուծությունը:

21. «Հրապարակային առաջարկ իրականացնող անձը» կամ «Առևտրին թույլտվություն հայցող անձը» մասում, սույն կանոնակարգի 15-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի ներառվում են նաև սույն կանոնակարգի 20-րդ կետով սահմանված տեղեկությունները:

22. «Կրիպտոակտիվ և կրիպտոակտիվի նախագիծ» մասում, սույն կանոնակարգի 16-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի, ներառվում է նաև.

1) սպառողական թոքենի միջոցով ձեռք բերվող կամ օգտագործվող ապրանքների կամ ծառայությունների հիմնական հատկանիշները, եթե առաջարկվող կամ առևտրային հարթակում առևտրին թույլտվության հայցը վերաբերում է սպառողական թոքենին,
2) սպառողական թոքենի միջոցով ձեռք բերվող կամ օգտագործվող ապրանքների և ծառայությունների քանակի և որակի վերաբերյալ տեղեկատվություն,
3) սպառողական թոքենների միջոցով ապրանքներ կամ ծառայություններ ձեռք բերելու կամ դրանցից օգտվելու ընթացակարգը:

23. «Կրիպտոակտիվի հրապարակային առաջարկ» կամ «Առևտրային հարթակում կրիպտոակտիվի առևտրին թույլտվության հայց» մասում, սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի, ներառվում է նաև.

1) հրապարակային առաջարկի կամ առևտրային հարթակում առևտրին թույլտվություն հայցելու նպատակը,
2) հրապարակային առաջարկի միջոցով հավաքագրվող միջոցների ծրագրված ծավալը,
3) թողարկման ընդհանուր ծավալը, ներառյալ՝ արդեն իսկ թողարկված և նախատեսված ծավալը: Եթե թողարկման ծավալը դեռևս որոշված չէ, ապա նկարագրվում է ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները:

Գ Լ ՈՒ Խ 6
ԱԿՏԻՎԻՆ ԿՑՎԱԾ ԹՈՔԵՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

24. Ակտիվին կցված թոքեն հանդիսացող կրիպտոակտիվի առաջարկի փաստաթուղթը, սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված տեղեկություններից բացի, ներառում է սույն գլխով պահանջված տեղեկատվությունը: Ընդ որում, սույն գլխով սահմանված պահանջները չեն տարածվում էլեկտրոնային փողի թոքեն հանդիսացող կրիպտոակտիվների վրա:

25. «Կրիպտոակտիվի թողարկողը» մասում, սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի, ներառվում է.

1) թողարկողի լիցենզիայի տվյալները,
2) հստակ նշում այն մասին, թե արդյոք թողարկող անձը թողարկում է նաև այլ կրիպտոակտիվներ կամ զբաղվում է կրիպտոակտիվների հետ առնչվող այլ գործունեությամբ:

26. «Կրիպտոակտիվ և կրիպտոակտիվի նախագիծ» մասում, սույն կանոնակարգի 16-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի, ներառվում է նաև.

1) կրիպտոակտիվից բխող իրավունքների և պարտավորությունների նկարագրության մեջ՝
   ա. մարման իրավունքի և Օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված թոքենի սեփականատիրոջ իրավունքների վերաբերյալ,
   բ. նշված իրավունքների կիրառելիությունը թողարկողի սնանկացման պարագայում,
2) ակտիվին կցված թոքեն ձեռք բերող անձի պահանջի իրավունքի մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝
   ա. կցված յուրաքանչյուր ակտիվի մանրամասն նկարագրությունները և տվյալ ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր ակտիվների նկատմամբ,
   բ. պահանջի չափի հաշվարկման կարգը,
3) կիրառելիության դեպքում՝ թոքենի իրացվելիությունը ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցառումները, ներառյալ՝ իրացվելիություն ապահովելու համար պատասխանատու ընկերությունների անվանումները,
4) հաճախորդների բողոք-պահանջների ներկայացման եղանակները, ինչպես նաև բողոք-պահանջների ընդունման, քննության և որոշումների կայացման ընթացակարգի նկարագրությունը,

5) թոքենի սեփականատերերի իրավունքները՝ Օրենքի 66-րդ հոդվածին համապատասխան վերականգնման ծրագրի կիրառման դեպքում,
6) թոքենի սեփականատերերի իրավունքները՝ մարումների ծրագրի կիրառման դեպքում, ներառյալ՝ մարման եղանակը, փոխանցման եղանակը կամ մարման արժույթը ընտրելու՝ սեփականատիրոջ իրավունքը:

27. «Կրիպտոակտիվի հրապարակային առաջարկ» կամ «Առևտրային հարթակում առևտրին թույլտվության հայց» մասում, սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի, ներառվում է նաև.
1) հրապարակային առաջարկի միջոցով հավաքագրվող միջոցների ծրագրված ծավալը,
2) թողարկման ընդհանուր ծավալը, ներառյալ՝ արդեն իսկ թողարկված և նախատեսված ծավալը: Եթե թողարկման ծավալը դեռևս որոշված չէ, ապա նկարագրվում է ծավալի որոշման մեթոդը կամ պայմանները:

28. «Պահուստային ակտիվներ» մասում առնվազն ներկայացվում է.
1) պահուստային ակտիվների արժեքը թողարկված թոքենների արժեքի նկատմամբ կայուն պահելու նպատակով ներդրված մեխանիզմների մանրամասն նկարագրությունը, ներառյալ՝ իրավական և տեխնիկական մեխանիզմները,
2) պահուստային ակտիվների և դրանց կառուցվածքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը,
3) թոքենները թողարկելու և մարելու մեխանիզմների նկարագրությունը,
4) պահուստային ակտիվների պահպանության, կառավարման և ներդրման քաղաքականությունների և ընթացակարգերի նկարագրությունը, ներառյալ՝ պահուստային ակտիվների առանձնացված հաշվառումը,
5) պահուստային ակտիվների պահպանությունը իրականացնող անձանց անվանումները,
6) պահուստային ակտիվների կառավարման և ներդրման հետ կապված գործառույթներն այլ անձանց պատվիրակելու դեպքում՝ պատվիրակված անձանց անվանումները:

Գ Լ ՈՒ Խ 7
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ԹՈՔԵՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

29. Էլեկտրոնային փողի թոքեն հանդիսացող կրիպտոակտիվի առաջարկի փաստաթուղթը, սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված տեղեկություններից բացի, ներառում է սույն գլխով սահմանված տեղեկատվությունը:

30. «Կրիպտոակտիվի թողարկողը» մասում, սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի, ներկայացվում են նաև թողարկողի լիցենզիայի տվյալները:

31. «Կրիպտոակտիվ և կրիպտոակտիվի նախագիծ» մասում, սույն կանոնակարգի 16-րդ կետով սահմանված տեղեկություններից բացի, ներառում է նաև.
1) կրիպտոակտիվից բխող իրավունքների և պարտավորությունների նկարագրության մեջ ներառվում է էլեկտրոնային փողի թոքենը դրա անվանական արժեքին համարժեք դրամական միջոցներով մարելու սեփականատիրոջ իրավունքը,
2) թոքենի սեփականատերերի իրավունքները՝ մարումների ծրագրի կիրառման դեպքում,
3) հաճախորդների բողոք-պահանջների ներկայացման եղանակները, ինչպես նաև բողոք-պահանջների ընդունման, քննության և որոշումների կայացման ընթացակարգի նկարագրությունը:

Գ Լ ՈՒ Խ 8
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՁԵՎԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

32. Օտարերկրյա թողարկողի կողմից թողարկված կրիպտոակտիվի՝ որի համար արդեն իսկ հրապարակված է առաջարկի փաստաթուղթ, Հայաստանի Հանրապետության տարածքում հրապարակային առաջարկ անելու կամ առևտրային հարթակում առևտրին թույլատվություն հայցելու նպատակով կազմված առաջարկի փաստաթուղթը առնվազն ներառում է.

1) կրիպտոակտիվ թողարկողի կողմից հրապարակված առաջարկի փաստաթղթի հղումը: Ընդ որում, թողարկողի կողմից առաջարկի փաստաթղթի թարմացման դեպքում, սույն գլխի համաձայն հրապարակված առաջարկի փաստաթուղթը պետք է ներառի թարմացված առաջարկի փաստաթղթի հղումը,
2) կրիպտոակտիվ թողարկողի մասին ընդհանուր տվյալներ՝ ներառյալ անվանումը և գտնվելու վայրը,
3) աչքի ընկնող ձևաչափով հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ. «ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՉԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿԻ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ:»,
4) եթե օտարերկրյա թողարկողի կողմից թողարկված կրիպտոակտիվը թողարկման երկրի օրենսդրության համաձայն համարվում է ակտիվին կցված թոքեն, ապա առաջարկի փաստաթղթում աչքի ընկնող ձևաչափով ներառվում է հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ.

   «ՍՈՒՅՆ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԻ ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱԿՏԻՎԻՆ ԿՑՎԱԾ ԹՈՔԵՆ: ԱՌԿԱ ՉԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԴՐԱ ԳԻՆԸ ԿԱՅՈՒՆ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԻՍԿ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻՆ ԿՑՎԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ՄԱՐՄԱՆ ԿԱՄ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՉԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ: ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ՝ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎԻ ԱՐԺԵՔԸ ՊԱՇՏՊԱՆՈՂ ԿԱՄ ԿԱՅՈՒՆ ՊԱՀՈՂ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐԵՎԷ ԿԵՐՊ ՉԵՆ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ ԿԱՄ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:»:

30 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 227-Ն

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը» կանոնակարգ 7/01-ը սահմանելու մասին *

Նպատակ ունենալով սահմանել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց գործունեության թույլտվության կարգը, անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև դրանց՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացման կարգը և ժամկետները,

հիմք ընդունելով «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 8-րդ մասերը, 20-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, 22-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը, 25-րդ հոդվածի 5-րդ մասը, 26-րդ հոդվածի 2-րդ մասը, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 10-րդ մասերը, 28-րդ հոդվածի 3-րդ մասը, 94-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել «Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը» կանոնակարգ 7/01-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. դեկտեմբերի 30-ին (ՀՀԳՏ, 21.01.2026):

Հավելված

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 227-Ն որոշման

«ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 7/01

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
   1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցման և լիցենզավորման կարգը, փաստաթղթերի և տեղեկությունների բովանդակության նկատմամբ պահանջները,
   2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիայի միասնական ձևը,
   3) օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի (այսուհետ նաև՝ օտարերկրյա անձ) մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրման կարգը, փաստաթղթերի և տեղեկությունների բովանդակության նկատմամբ պահանջները,
   4) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կողմից կրիպտոակտիվներով լրացուցիչ (ևս մեկ կամ ավել) ծառայության մատուցման լիցենզիայի, թույլտվության ստացման կարգը,
   5) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի և օտարերկրյա անձի մասնաճյուղի գործարար ծրագրի ձևը, ինչպես նաև՝ գործարար ծրագրի և դրանում կատարվող փոփոխությունների ներկայացման կարգը և ժամկետները,
   6) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության ստեղծման մասին Կենտրոնական բանկին տեղեկացնելու կարգը,
   7) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման, ինչպես նաև գործունեության ժամանակավոր դադարեցման կարգը և պայմանները,
   8) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության իրականացման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության ստացման կարգը,
   9) ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, կարգավորվող շուկայի օպերատորի և կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման թույլտվություն ստանալու կարգը և կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման կարգը,
   10) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան, օտարերկրյա անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության թույլտվությունը ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու կարգը,

11) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը,
12) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկությունների ներկայացման կարգը,
13) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կողմից պարբերաբար ներկայացվող՝ փոխկապակցված և նշանակալից մասնակիցների վերաբերյալ հաշվետվությունները և տեղեկությունները,
14) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի և կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի գործունեության տարածքի նկատմամբ պահանջները,
15) սույն կանոնակարգի համաձայն ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների փոփոխությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը:

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով և ուղեկցող գրությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ պահպանվող տեղեկությունների՝ որոնք կարող են ներկայացվել նաև առձեռն Կենտրոնական բանկ մուտքագրելու միջոցով: Ընդ որում, փաստաթղթերը ներկայացվում են հայերեն, Յունիկոդ տառատեսակով, «Փի Դի Էֆ» ֆորմատով, բացառությամբ՝ գործարար ծրագրին կից աղյուսակների, որոնք ներկայացվում են էքսել ֆորմատով:
3. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կանոնադրությունները (դրանցում կատարվող փոփոխությունները, լրացումները) Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային-թվային ստորագրությամբ:
4. Նոր ստեղծվող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք, ինչպես նաև օտարերկրյա անձի նոր ստեղծվող մասնաճյուղերի վրա սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է Կենտրոնական բանկի կողմից էլեկտրոնային-թվային ստորագրություն ստանալու պահից: Ընդ որում, սույն կետով նախատեսված անձինք, երբ արդեն միացված են Սի-Բի-Էյ-նեթ համակարգին և ստացել են անվտանգության համապատասխան հավաստագրերը, Կենտրոնական բանկի կողմից գրանցված կանոնադրությունները կրկին ներկայացնում են Կենտրոնական բանկ ՍԻ-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով «Փի Դի Էֆ» ֆորմատով, էլեկտրոնային-թվային ստորագրությամբ՝ համապատասխան ստորագրությունն ստանալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:
5. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ կառավարման իրավասու մարմնի կողմից ստորագրված: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում), բացառությամբ սույն կանոնակարգի հավելվածներով սահմանված միջնորդագրերի ձևերի, միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական և գիտակցում է, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել միջնորդագրի (դիմումի) մերժմանը:
6. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը ներկայացուցչի միջոցով ներկայացնելու դեպքում ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրված լիազորագիրը:

7. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

կրիպտոակ-տիվներով ծառայություն-ներ մատուցող անձի անվանումը	գծիկ	Փաստա-թղթի տեսակը	գծիկ	Փաստա-թղթի բովանդա-կությունը (12 տառի սահմաննե-րում)	գծիկ	ամսա-թիվ՝ օօաա տտ ֆորմա տով	կետ	ֆայլի հապա-վումը

8. Օտարալեզու փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված, նոտարական կարգով վավերացված կամ լիցենզավորված թարգմանչի կողմից թարգմանված հայերեն թարգմանության հետ, ընդ որում՝ հայերեն և օտարալեզու փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին: Օտարալեզու այն փաստաթղթերը, որոնց բնօրինակը անգլերեն կամ ռուսերեն է, կարող է ներկայացվել առանց թարգմանության, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկը պահանջում է դրանց հայերեն թարգմանությունները:
9. Սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավական բնույթի անճշտություններ, թվաբանական սխալներ կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում՝ թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին՝ միջնորդագրում նշված կոնտակտային տվյալների միջոցով և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:
10. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման, ինչպես նաև սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկի կողմից ընդունվող այլ որոշումների համար «Կրիպտոակտիվների մասին» օրենքով **(այսուհետ՝ Օրենք)** սահմանված ժամկետների հաշվարկն սկսվում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:
11. Սույն կանոնակարգով սահմանված լիցենզավորման, գրանցման, նախնական համաձայնության ստացման, թույլտվության ստացման կամ տեղեկացման համար սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա այն տեղեկատվությունը, որը նախկինում՝ տվյալ կամ այլ գործընթացի շրջանակներում, արդեն ներկայացվել է Կենտրոնական բանկ, կրկին Կենտրոնական բանկ ներկայացվում է միայն փոփոխված լինելու դեպքում՝ փոփոխությունների մասով: Ընդ որում, սույն կետի համաձայն համապատասխան փոփոխությունները չներկայացվելու կամ միայն փոփոխությունների մասով ներկայացվելու դեպքում միջնորդագրում (դիմումում) նշվում է այդ մասին՝ ներկայացնելով, թե ինչ գործընթացի շրջանակում և երբ են ներկայացվել փոփոխությունները:
12. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա տեղեկատվության փոփոխության կայացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, փոփոխված փաստաթուղթը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ:
13. Սույն կանոնակարգով սահմանված դեպքերում միջազգային վարկանշող կազմակերպությունների կողմից տրված վարկանիշերը կիրառվում են հետևյալ սկզբունքով, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով.

1) եթե կազմակերպությունն ունի սույն կանոնակարգում նշված միայն մեկ վարկանշող կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը,
2) եթե կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը,
3) եթե կազմակերպությունն ունի երեք և ավելի վարկանիշ՝ տրամադրված սույն կանոնակարգում նշված տարբեր վարկանշող կազմակերպությունների կողմից, ապա հիմք է ընդունվում երկու ամենաբարձր վարկանիշերից առավել ցածր վարկանիշը:

14. Սույն կանոնակարգով պահանջվող ֆինանսական հաշվետվությունները պետք է կազմված լինեն.
1) «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով սահմանված ստանդարտներին համապատասխան, կամ
2) օտարերկրյա իրավաբանական անձանց դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտների համապատասխան:

15. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական կամ վերահսկողական նպատակներից ելնելով, կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

16. Կենտրոնական բանկի կողմից Օրենքի համաձայն՝ դիմումի, միջնորդագրի կամ ցանկացած այլ միջնորդության քննության ժամկետի կասեցման դեպքում քննության վերսկսման որոշման պահից քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և քննության համար սահմանված ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

17. Կանոնադրական կապիտալի մուծումը կամ կանոնադրական կապիտալի ավելացումն առաջին անգամ Կենտրոնական բանկում բացվող կուտակային հաշվի միջոցով իրականացնելու դեպքում Կենտրոնական բանկ է ներկայացվում կուտակային հաշիվ բացելու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի, ինչպես նաև՝ կուտակային հաշվի բացման համար վճարման անդորրագիրը:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
1) ֆինանսական խումբ՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 10՝ «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտով կամ միջազգայնորեն ընդունված այլ ստանդարտով սահմանված դեպքերում համախմբված ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող սուբյեկտ,
2) ֆինանսական հաշվետվություններ՝ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ,
3) ֆինանսական վիճակի վատթարացում՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ֆինանսական վիճակի առկա կամ հնարավոր վատթարացում են համարվում այն դեպքերը, երբ.

ա. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը խախտել է հիմնական տնտեսական նորմատիվները կամ առկա է հիմնական տնտեսական նորմատիվների խախտման մեծ հավանականություն,

բ. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մոտ առկա է մեծ հավանականություն, որ կառաջանան «Բանկերի, ներդրումային ընկերությունների, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքի 2-րդ հոդվածում սահմանված անվճարունակության հիմքերը:

19. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացությունները կիրառվում են Օրենքով սահմանված իմաստով:

ԳԼՈՒԽ 3
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

20. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցման և լիցենզավորման համար Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

1) Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.

ա. գրանցման և լիցենզավորման դիմումը ներկայացվում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի,

բ. դիմորդի գործարար ծրագիրը (Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում) ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի,

գ. դիմորդի իրավասու կառավարման մարմնի կողմից հաստատված կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 8-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

դ. դիմորդի ֆիրմային անվանման գրանցման հայտը ներկայացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգի» պահանջների,

ե. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կանոնների նախագծերը ներառում են առնվազն Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործունեության կանոնները, ինչպես նաև այն կանոնների, կանոնակարգերի, ընթացակարգերի, քաղաքականությունների նախագծերը, որոնք պահանջվում են օրենսդրությամբ՝ կախված անձի կողմից մատուցվող ծառայությունների տեսակներից,

զ. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ղեկավարների գրանցման համար պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց մասնաճյուղերի ղեկավարների գրանցման կարգը» կանոնակարգ 7/05-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 7/05),

ը. դիմորդի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու համար ներկայացվում են սույն կանոնակարգի 13-րդ և 14-րդ գլուխներով սահմանված փաստաթղթերը,

2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ստեղծման մասին հիմնադիր պայմանագիրը (որոշումը),

3) դիմորդի հիմնադիրների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի,

4) դիմորդի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 12-ի և Հավելված 13-ի,
5) Կենտրոնական բանկի պահանջով՝ դիմորդի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 12-ի և Հավելված 13-ի,
6) դիմորդի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում,
7) Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում՝ հիմնավորումներ այն մասին, որ կրիպտոակտիվների փաթեթի կառավարում իրականացնող և կրիպտոակտիվների հետ կապված խորհրդատվություն տրամադրող աշխատակիցները ունեն բավարար գիտելիքներ և փորձ իրենց պարտականությունները կատարելու համար,
8) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 228-Ն որոշմամբ հաստատված «Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող և հաշվարկից նվազեցվող տարրերը» կանոնակարգ 7/02-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 7/02) սահմանված՝ ընդհանուր կապիտալի պահանջի բավարարումը հիմնավորող փաստաթղթեր, մասնավորապես՝ Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետությունում գործող դիմորդի հետ չփոխկապակցված որևէ այլ բանկում կանոնադրական կապիտալի համալրման նպատակով բացված կուտակային հաշվում առկա միջոցների փաստացի մեծությունը հավաստող տեղեկանք,
9) եթե դիմորդը գրանցվում է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ապա ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն հանդիսացող կազմակերպությունների մասնակիցների գրանցամատյանի վարման կարգ» թիվ 206-Ն որոշմամբ պահանջվող փաստաթղթերը:

21. Սույն կանոնակարգի 20-րդ կետի 4-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում այն անձանց համար, որոնք հանդիսանում են.
1) դիմորդի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների,
3) միջազգային կազմակերպություն,
4) Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում՝ միջազգային համբավ կամ Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից սահմանված «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ:

22. Սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) դիմորդի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, և որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների:

23. Եթե դիմորդի հետ փոխկապակցված իրավաբանական անձինք ընդգրկված են որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված տեղեկությունների փոխարեն ներկայացվում են սույն կետում նշված հաշվետվությունը (տեղեկությունները).
1) խմբի կառուցվածքը,
2) խմբի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում:
24. Միևնույն խմբում կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կանոնակարգի 23-րդ կետով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացնում է նրանցից որևէ մեկը:
25. Կենտրոնական բանկը կարող է դիմորդի լիցենզավորման գործընթացի ժամանակ դիմորդի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ պահանջել սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետերով սահմանված տեղեկատվությունը, իսկ եթե դիմորդի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձը ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա նաև սույն կանոնակարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):
26. Եթե սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետով կամ սույն կանոնակարգի 23-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղադրված են, համապատասխանաբար, իրավաբանական անձի կամ խմբի ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:
27. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան տրվում է էլեկտրոնային եղանակով, որը Կենտրոնական բանկը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի: Ընդ որում, լիցենզիայում նշվում են նաև այն ծառայությունները, որոնց մատուցման համար դիմորդը ստացել է լիցենզիան:
28. Իրավաբանական անձինք, որոնք Օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում մատուցել են Օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված ծառայություններ, Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու և լիցենզավորվելու համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
1) սույն կանոնակարգի 20-րդ կետով սահմանված փաստաթղթերը, բացառությամբ՝ 1-ին կետի «դ» ենթակետի, 2-րդ, 3-րդ և 8-րդ կետերի,
2) դիմորդի բաժնետերերի ռեեստրից կամ մասնակիցների գրանցամատյանից քաղվածք,
3) Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված գործառույթների պատվիրակման դեպքում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված՝ գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնություն տրամադրելու կարգով սահմանված փաստաթղթերը,

4) Կանոնակարգ 7/02-ով սահմանված՝ ընդհանուր կապիտալի պահանջի բավարարումը հիմնավորող փաստաթղթեր, ինչպես նաև՝ դիմորդի ֆինանսական հաշվետվությունները և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում: Ընդ որում, եթե գրանցման և լիցենզավորման դիմելու պահի դրությամբ դիմորդի ընդհանուր կապիտալը չի բավարարում Կանոնակարգ 7/02-ով սահմանված կապիտալի նվազագույն սահմանաչափերին, ապա ներկայացվում է նաև Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետությունում գործող դիմորդի հետ չփոխկապակցված որևէ այլ բանկում՝ Կանոնակարգ 7/02-ով սահմանված ընդհանուր կապիտալի պահանջը բավարարելու համար կանոնադրական կապիտալի համալրման նպատակով բացված կուտակային հաշվում առկա միջոցների փաստացի մեծությունը հավաստող տեղեկանք՝ առնվազն տարբերության չափով և դիմորդի կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցվելու և լիցենզավորվելու դեպքում կանոնադրական կապիտալը համալրելու վերաբերյալ,

5) դիմորդի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված՝ նոր խմբագրությամբ կանոնադրությունը, որը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 8-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

6) դիմորդի՝ ապակենտրոնացված գրանցամատյանում բացված հասցեները՝ համաձայն Հավելված 10-ի: Ընդ որում, եթե դիմորդը կրիպտոակտիվներ ստանալու համար գեներացնում է բազմաթիվ հասցեներ և այդ հասցեները օգտագործվում են միայն մեկ անգամ կամ մեկ հաճախորդի կողմից՝ կրիպտոակտիվներ ընդունելու և հիմնական պահառուական հասցեներ փոխանցելու համար, ապա ներկայացվում են միայն հիմնական պահառուական հասցեները:

29. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցման վկայականը տրվում է էլեկտրոնային եղանակով՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի:

ԳԼՈՒԽ 4
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

30. Օտարերկրյա անձը Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղի գործունեության թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.

ա. մասնաճյուղի գործունեությանը թույլտվություն տրամադրելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի,

բ. մասնաճյուղի գործարար ծրագիրը Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի,

գ. օտարերկրյա անձի իրավասու կառավարման համապատասխան մարմնի կողմից հաստատված մասնաճյուղի կանոնադրությունը պետք է ունենա սույն կանոնակարգի Հավելված 8-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ,

դ. Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետով նախատեսված կանոնների նախագծերը ներառում են առնվազն Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործունեության կանոնները,

ե. օտարերկրյա անձի մասնաճյուղի ղեկավարների գրանցման համար պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն Կանոնակարգ 7/05-ի,

է. օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի,

2) օտարերկրյա անձի ապակենտրոնացված գրանցամատյանում բացված հասցեները՝ համաձայն հավելված 10-ի: Ընդ որում, եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կրիպտոակտիվներ ստանալու համար գեներացնում է բազմաթիվ հասցեներ և այդ հասցեները օգտագործվում են միայն մեկ անգամ կամ մեկ հաճախորդի կողմից՝ կրիպտոակտիվներ ընդունելու և հիմնական պահառուական հասցեներ փոխանցելու համար, ապա ներկայացվում են միայն հիմնական պահառուական հասցեները,

3) օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի և Հավելված 13-ի,

4) Կենտրոնական բանկը կարող է պահանջել օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 12-ի և Հավելված 13-ի,

5) օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում,

6) օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց համար սույն կանոնակարգի 60-րդ կետի 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված փաստաթղթերը, իսկ նշանակալից մասնակցություն ունեցող ֆիզիկական անձանց համար սույն կանոնակարգի 64-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը,

7) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա անձի մասնաճյուղի կողմից այդ մասնաճյուղի գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում այդ պարտավորությունները օտարերկրյա անձի կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,

8) մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի գրանցման երկրի կրիպտոակտիվների ոլորտի վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստումն առ այն, որ օտարերկրյա անձը չի խախտել տվյալ երկրի կրիպտոակտիվների ոլորտի գործունեության կարգավորումը կամ վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում, իսկ եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի գործունեությունը պակաս է երկու տարուց, ապա՝ գործունեության ողջ ընթացքում,

9) Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի անունով ավանդի ներդրումը հավաստող փաստաթղթեր: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված ավանդը պետք է առնվազն կազմի

ա. 4 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 4 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ,

եթե օտարերկրյա անձը դիմել է կրիպտոակտիվների հետ կապված խորհրդատվության տրամադրման լիցենզիա ստանալու համար,

բ. 8 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 8 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է հաճախորդի հաշվին կրիպտոակտիվներով առքուվաճառքի իրականացման, կրիպտոակտիվներով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման, կրիպտոակտիվների տեղաբաշխման, կրիպտոակտիվների փաթեթի կառավարման կամ կրիպտոակտիվների փոխանցման մատուցման լիցենզիա ստանալու համար,

գ. 20 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 20 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է կրիպտոակտիվների պահառության կամ իր հաշվին կրիպտոակտիվներով առքուվաճառքի իրականացման լիցենզիա ստանալու համար,

դ. 28 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 28 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է կրիպտոակտիվների առևտրային հարթակի գործարկման լիցենզիա ստանալու համար,

ե. 80 000 000 Հայաստանի Հանրապետության դրամ կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 80 000 000 Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթ, եթե օտարերկրյա անձը դիմել է ակտիվին կցված թոքենի թողարկման լիցենզիա ստանալու համար,

զ. միաժամանակ մի քանի տեսակի ծառայությունների մատուցման թույլտվություն ստանալու համար դիմած օտարերկրյա անձի կողմից ներդրված ավանդի մեծությունը պետք է բավարարի սույն ենթակետով տվյալ կրիպտոակտիվներով ծառայության համար սահմանված չափերից առավելագույնին,

է. սույն ենթակետով սահմանված ավանդի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ավանդը ավանդատուի պահանջով ենթակա է վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում: Միևնույն ժամանակ, մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձը ստանձնել է անվերապահ պարտավորություն, համաձայն որի՝ այն դեպքում, երբ օրենքի համաձայն, ավանդի գումարը ենթակա է անվերապահ վերադարձման՝ անկախ կողմերի համաձայնությունից, վերադարձված գումարը համապատասխան բանկից ստանալուց հետո պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում որպես ավանդ մուծել Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում՝ սույն ենթակետով սահմանված պայմաններով,

ը. սույն ենթակետով սահմանված ավանդը արտարժույթով ներդնելու դեպքում օտարերկրյա անձը պետք է ապահովի, որպեսզի արտարժույթով ավանդը համարժեք լինի նախատեսված սահմանաչափերին առնվազն յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ:

31. Սույն կանոնակարգի 30-րդ կետի 3-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում այն անձանց համար, որոնք հանդիսանում են.
    1) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների,
    2) միջազգային կազմակերպություն,
    3) Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնության առկայության դեպքում՝ միջազգային համբավ կամ Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից սահմանված «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպություններ:
32. Սույն կանոնակարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված տեղեկությունները չեն ներկայացվում այն անձանց համար, որոնք հանդիսանում են.

1) օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձ, որոնց համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների:

33. Օտարերկրյա անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 32-րդ կետով նշված փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումները, գրանցման համարները և գտնվելու վայրերը:
34. Եթե օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձինք ընդգրկված են որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետերով սահմանված տեղեկությունների փոխարեն ներկայացվում են սույն կետում նշված հաշվետվությունը (տեղեկությունները).
    1) խմբի կառուցվածքը,
    2) խմբի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում:
35. Միևնույն խմբում կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում սույն կանոնակարգի 34-րդ կետով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացնում է նրանցից որևէ մեկը:
36. Կենտրոնական բանկը կարող է օտարերկրյա անձի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով պահանջել սույն կանոնակարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետերով, իսկ եթե օտարերկրյա անձի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձը ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա նաև՝ սույն կանոնակարգի 34-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները):
37. Եթե սույն կանոնակարգի 30-րդ կետի 5-րդ ենթակետով կամ սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են, համապատասխանաբար, իրավաբանական անձի կամ խմբի ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:
38. Կենտրոնական բանկի կողմից օտարերկրյա անձի մասնաճյուղին տրամադրվում է թույլտվություն, եթե Կենտրոնական բանկի և մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա անձի գրանցման երկրի կրիպտոակտիվների ոլորտի կարգավորումն ու վերահսկողությունն իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) կրիպտոակտիվների վերահսկողության ոլորտում համագործակցության վերաբերյալ:
39. Օտարերկրյա անձի մասնաճյուղի գործունեության թույլտվությունը տրվում է էլեկտրոնային եղանակով, որը Կենտրոնական բանկը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի: Ընդ որում, տրված գործունեության թույլտվությունում նշվում են նաև այն ծառայությունները, որոնց մատուցման համար օտարերկրյա անձը ստացել է թույլտվություն:

ԳԼՈՒԽ 5
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ

40. Օտարերկրյա անձը Հայաստանի Հանրապետության տարածքում ներկայացուցչության գործունեության թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
    1) Օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.
       ա. ներկայացուցչության գործունեությանը թույլտվություն տրամադրելու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 16-ի, ընդ որում, դիմումում ներկայացվում է նաև ներկայացուցչություն բացելու հիմնավորումը,
       բ. օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկանքը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 14-ի,
    2) տեղեկանք ներկայացուցչության ղեկավարի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի:
41. Օտարերկրյա անձի ներկայացուցչության գործունեության թույլտվությունը տրվում է էլեկտրոնային եղանակով, որը Կենտրոնական բանկը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի:

ԳԼՈՒԽ 6
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ

42. Գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կրիպտոակտիվներով լրացուցիչ (ևս մեկ կամ ավել) ծառայության մատուցման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
    1) Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.
       ա. կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու լիցենզիայի դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի,
       բ. օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում գործարար ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի:
43. Օտարերկրյա անձի գործող մասնաճյուղը կրիպտոակտիվներով լրացուցիչ (ևս մեկ կամ ավել) ծառայություն մատուցելու թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
    1) Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով պահանջվող փաստաթղթերը, ընդ որում.
       ա. կրիպտոակտիվներով լրացուցիչ ծառայություն մատուցելու թույլտվության դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 17-ի,
       բ. օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայությունների մատուցման դեպքում գործարար ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի:
44. Օրենքով սահմանված կարգով, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին կամ օտարերկրյա անձին լրացուցիչ ծառայության մատուցման լիցենզիա կամ թույլտվություն տրամադրելու դեպքում, Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը կատարում է համապատասխան փոփոխություններն իր կայքում հրապարակված լիցենզիայի, մասնաճյուղի գործունեության թույլտվության մեջ:

ԳԼՈՒԽ 7
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ

45. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը սկսելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկին տեղեկացնում է՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 18-ի:

ԳԼՈՒԽ 8
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

46. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելուց կամ ժամանակավոր դադարեցնելուց առնվազն 30 աշխատանքային օր առաջ Կենտրոնական բանկին տեղեկացնում է դրա մասին: Ընդ որում, տեղեկացումը ներառում է նաև մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության դադարեցման, ժամանակավոր դադարեցման ժամկետները և դադարեցման, ժամանակավոր դադարեցման հիմնավորումները:
47. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելուց կամ ժամանակավոր դադարեցնելուց առնվազն 30 աշխատանքային օր առաջ մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեությունը դադարեցնելու մասին տեղեկատվությունը հրապարակում է իր ինտերնետային կայքում և սոցիալական ցանցի իր էջերում:
48. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը այլ երկրի համապատասխան իրավասու մարմնի կողմից գրանցումից հանելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում այդ փաստը վկայող փաստաթուղթը:

ԳԼՈՒԽ 9
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

49. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղ ստեղծելիս Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
    1) նախնական համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի,
    2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղ բացելու վերաբերյալ,
    3) մասնաճյուղի ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,

4) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ մասնաճյուղի ղեկավարներ նշանակելու մասին:

50. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ներկայացուցչություն ստեղծելիս Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
   1) նախնական համաձայնություն ստանալու վերաբերյալ միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 19-ի,
   2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ ներկայացուցչություն բացելու մասին,
   3) ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի:

ԳԼՈՒԽ 10
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

51. Ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, կարգավորվող շուկայի օպերատորի և կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցելու թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացվում Օրենքի 27-րդ հոդվածի 1-րդ մասով պահանջվող փաստաթղթերը՝ ընդ որում.

   ա. կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման թույլտվություն ստանալու միջնորդագիրը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 20-ի,

   բ. գործարար ծրագրում, կանոնադրության մեջ և գործունեության կանոններում կատարված փոփոխությունները ներկայացվում են ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, կարգավորվող շուկայի օպերատորի և կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ի, Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի,

դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 10/01-ի, Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 5/01-ի և Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 5/02-ի համապատասխան դրույթների:

ԳԼՈՒԽ 11
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ, ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

52. Ներդրումային ընկերությունը, ներդրումային ֆոնդի կառավարիչը, կարգավորվող շուկայի օպերատորը և կենտրոնական դեպոզիտարիան (այսուհետ՝ սույն գլխում կազմակերպություն) կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման թույլտվություն ստանալու նպատակով Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
    1) կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցումը թույլատրելու մասին միջնորդագիր՝ կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
    2) կազմակերպության կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցումը դադարեցնելու մասին,
    3) կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման հիմնավորումները,
    4) կազմակերպության կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցմանն առնչվող ակտիվների և պարտավորությունների փոխանցման ուղղությամբ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները, գործողությունները և դրանց կատարման ժամկետները:
53. Սույն կանոնակարգի 52-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 30-օրյա ժամկետում Կենտրոնական բանկը որոշում է կայացնում թույլ տալ կազմակերպությանը դադարեցնել կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցումը կամ թույլ չտալ՝ մերժման հիմքերի մասին կազմակերպության տեղեկացնելով:
54. Կենտրոնական բանկի կողմից 30-օրյա ժամկետում միջնորդագիրը չմերժելու դեպքում կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման թույլտվությունը համարվում է տրված:
55. Սույն կանոնակարգի 53-րդ կետով սահմանված որոշման ընդունման օրվան հաջորդող կամ սույն կանոնակարգի 54-րդ կետով նախատեսված դեպքում 30-օրյա ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունը կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման մասին տեղեկատվությունը հրապարակում է իր ինտերնետային կայքում:
56. Կենտրոնական բանկի կողմից կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման դադարեցման թույլտվության տրամադրման պահից սույն կանոնակարգի 52-րդ կետի 4-րդ

ենթակետով նախատեսված ժամկետում կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցմանն առնչվող ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը:

57. Սույն կանոնակարգի 52-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետում կազմակերպության կողմից կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցմանն առնչվող ակտիվների և պարտավորությունների փոխանցումը հաստատող փաստաթուղթը Կենտրոնական բանկ չներկայացնելու դեպքում, Կենտրոնական բանկի՝ կազմակերպությանը կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման թույլտվություն տալու որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

ԳԼՈՒԽ 12
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԼԻՑԵՆԶԻԱՆ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԿԱՄ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ

58. Օրենքով սահմանված հիմքերով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան, օտարերկրյա անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության թույլտվությունն ամբողջությամբ ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում, Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկն իր կայքից հեռացնում է կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան, օտարերկրյա անձի մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության թույլտվությունը:
59. Օրենքով սահմանված հիմքերով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լիցենզիան, օտարերկրյա անձի մասնաճյուղի գործունեության թույլտվությունն ըստ ծառայությունների առանձին տեսակների ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում, Կենտրոնական բանկի որոշման ընդունման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը կատարում է համապատասխան փոփոխություններն իր կայքում հրապարակված լիցենզիայի, մասնաճյուղի գործունեության թույլտվության մեջ:

ԳԼՈՒԽ 13
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

60. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցող անձի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
    1) իրավաբանական անձի կողմից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 21-ի,
    2) ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի ռեզիդենտության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով

սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն և անձի նկատմամբ չկա հարուցված սնանկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլինելու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլինելու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության երկրում,

3) իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը տվյալ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,
4) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում,
5) իրավաբանական անձի վերջին երեք տարիների (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
6) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 14-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
7) իրավաբանական անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 22-ի և Հավելված 23-ի:

61. Եթե իրավաբանական անձը ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 60-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված տեղեկությունների փոխարեն ներկայացվում են սույն կետում նշված հաշվետվությունը (տեղեկությունները).
    1) խմբի կառուցվածքը,
    2) խմբի վերջին երեք ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած խումբը նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը:
62. Միևնույն խմբում կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում այլ փոխկապակցված անձի կամ նշանակալից մասնակցի առկայության դեպքում, սույն կանոնակարգի 61-րդ կետով պահանջվող հաշվետվությունը (տեղեկությունները) ներկայացնում է նրանցից որևէ մեկը:
63. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերում միջազգային կազմակերպություն, ապա այն Կենտրոնական բանկ չի ներկայացնում սույն կանոնակարգի 60-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ և (կամ) Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

64. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում ուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
    1) ֆիզիկական անձի կողմից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն Հավելված 24-ի,
    2) ոչ ռեզիդենտ կամ այլ երկրի քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթուղթ և իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն և անձի նկատմամբ չկա հարուցված սնանկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլինելու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլինելու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրում,
    3) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կանոնակարգի 14-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
    4) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 22-ի և Հավելված 23-ի:
65. Պետությունը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝
    1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 25-ի,
    2) իր կառավարման իրավասու մարմնի որոշումը՝ տվյալ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին:

ԳԼՈՒԽ 14
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

66. Իրավաբանական անձը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար համապատասխան կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
    1) նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 21-ի,
    2) ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի ռեզիդենտության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն և անձի նկատմամբ չկա հարուցված սնանկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլինելու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլինելու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության երկրում,
    3) իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշումը տվյալ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մասին,
    4) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ ոչ ռեզիդենտ նշանակալից մասնակցի դեպքում,
    5) իրավաբանական անձի վերջին երեք տարիների (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության ողջ ժամկետի համար) և վերջին միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը,
    6) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի միջոցով որևէ այլ անձ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
    7) իրավաբանական անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 22-ի և Հավելված 23-ի:
67. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա նրանց կողմից Կենտրոնական բանկ չեն ներկայացվում սույն կանոնակարգի 66-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը: Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ կամ Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ վարկանշող կազմակերպությունների կողմից «A-» կամ ավելի բարձր կամ Մուդիզ վարկանշող կազմակերպության կողմից «A3» կամ ավելի բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:
68. Ֆիզիկական անձը նոր ստեղծվող կամ գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու համար համապատասխան

կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի միջնորդությամբ Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) ֆիզիկական անձի կողմից կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համար դիմում՝ համաձայն Հավելված 24-ի,
2) ոչ ռեզիդենտ կամ այլ երկրի քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթուղթ և իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն և անձի նկատմամբ չկա հարուցված սնանկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլինելու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլինելու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրում,
3) իր միջոցով անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն կետով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ ֆիզիկական անձի միջոցով որևէ այլ անձ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ է ձեռք բերում,
4) իր հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի՝ համապատասխանաբար Հավելված 22-ի և Հավելված 23-ի:

ԳԼՈՒԽ 15
ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ, ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԿԱՄ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

69. Անձը, որը ձեռք է բերում նշանակալից մասնակցություն կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում կամ ավելացնում է իր մասնակցությունը Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասում նշված սահմանաչափերից ավելի՝ ցանկացած իրադարձության կամ գործարքի արդյունքում, որի մասին անձը տեղյակ չէր և չէր կարող տեղյակ լինել, այդ մասին տեղեկանալու պահից 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 26-ի:
70. Նշանակալից մասնակիցը՝ Օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, 10 օրվա ընթացքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին ձեռքբերված բաժնետոմսերի կամ բաժնեմասերի օտարման մասին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 27-ի:

ԳԼՈՒԽ 16
ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

71. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով

կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք են բերում միաժամանակ մի քանի անձինք, ապա անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար ներկայացվում են օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն ֆիզիկական անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ այդ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն է ձեռք բերվում:

72. Ուղղակի նշանակալից մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի նշանակալից մասնակցության դիմումը համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի նշանակալից մասնակցության դիմումը: Ուղղակի նշանակալից մասնակցության դիմումը համարվում է մերժված, եթե նրա միջոցով ձեռքբերվող անուղղակի նշանակալից մասնակցության դիմումը մերժվել է:
73. Անձի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն նախնական համաձայնությունը Կենտրոնական բանկի կողմից տրվում է եռամսյա ժամկետով, եթե գործողության ավելի երկար ժամկետ տվյալ որոշմամբ նախատեսված չէ: Գործարքի իրականացումը հաստատող փաստաթղթերը ներկայացվում են Կենտրոնական բանկ: Եթե Կենտրոնական բանկի որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը չի իրականացվում կամ գործարքի իրականացումը հավաստող փաստաթղթերը չեն ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը համարվում է ուժը կորցրած:
74. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը տիրապետում է իր կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերող կամ ունեցող անձանց վերաբերյալ այնպիսի տեղեկատվության, որը Կենտրոնական բանկի կողմից տիրապետելու դեպքում կարող էր հանգեցնել նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմումի մերժմանը կամ նշանակալից մասնակցության գործողության դադարեցմանը օրենքով սահմանված կարգով, ապա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը տեղեկատվությունը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է Կենտրոնական բանկին:
75. Եթե ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակցությունը ձեռք են բերում իրար հետ փոխկապակցված անձինք, ապա սույն կանոնակարգի 13-րդ և 14-րդ գլուխներով պահանջվող փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

ԳԼՈՒԽ 17
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ, ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

76. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձը պարտավոր է տիրապետել արժանահավատ տեղեկությունների իր՝ «Փողերի լվացման և ահաբեկչության

ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված չափանիշներով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառու հանդիսացող անձանց և նրանց՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ:

77. Սույն կանոնակարգի 76-րդ կետով նախատեսված տեղեկությունների բացահայտման համար կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը պարտավոր է պարբերաբար, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իրականացնել պատշաճ ուսումնասիրություն՝ պահպանելով իրականացված ուսումնասիրությանն առնչվող բոլոր փաստաթղթերը: Իրական շահառուների հայտնաբերմանն առնչվող փաստաթղթերը ենթակա են պահպանման առնվազն հինգ տարի՝ ուսումնասիրության իրականացման պահից, բայց ոչ պակաս, քան հինգ տարի՝ սկսած այն պահից, երբ անձը, որին դրանք առնչվում են, դադարում է լինել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառու:
78. Սույն կանոնակարգի 77-րդ կետով նախատեսված պատշաճ ուսումնասիրության իրականացման ընթացքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը պարտավոր է հարցումներով դիմել այն անձանց, որոնց իրական շահառու հանդիսանալու վերաբերյալ առկա են կասկածներ, ինչպես նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնակիցներին կամ մասնակից իրավաբանական անձանց ներկայացուցիչներին, որոնք կարող են տիրապետել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների: Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին արժանահավատ և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու պարտականությունը կրում են սույն կետով նախատեսված հարցումը ստացած անձինք:
79. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ընկերության իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 28-ի:
80. Սույն կանոնակարգի 79-րդ կետով սահմանված հայտարարագիրը ենթակա է ներկայացման Կենտրոնական բանկ՝ ֆիզիկական անձի՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառու համարվելու մասին կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի տեղեկանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:
81. Անկախ սույն կանոնակարգի 80-րդ կետով նախատեսված ժամկետներից՝ մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 20-ը կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել՝
    1) հաստատում առ այն, որ իրական շահառուների վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված վերջին հայտարարագրերը պարունակում են արդիական տեղեկություններ նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կամ
    2) փոփոխված տեղեկություններ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի իրական շահառուների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 18
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐԲԵՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

82. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք և օտարերկրյա անձանց մասնաճյուղերը նշանակալից մասնակիցների և փոխկապակցված անձանց վերաբերյալ հետևյալ հաշվետվությունները և տեղեկությունները Կենտրոնական բանկի վիճակագրական

վարչություն են ներկայացնում մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը՝ ռեզիդենտների համար, մինչև յուրաքանչյուր տարվա օգոստոսի 1-ը՝ ոչ ռեզիդենտների համար.

1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի կազմում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը,
2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները, իսկ մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում՝ իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը՝ առկայության դեպքում,
3) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց ղեկավարների անունը, ազգանունը, պաշտոնը ներառող ցուցակը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 21-րդ և 31-րդ կետերով սահմանված դեպքերի,
4) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց անունը, ազգանունը ներառող ցուցակը:

83. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 82-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները).
    1) խմբի կառուցվածքը,
    2) խմբի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:
84. Եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձն ընդգրկված է որևէ խմբի կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա սույն կանոնակարգի 82-րդ կետի 2-ին ենթակետով սահմանված հաշվետվությունների (տեղեկությունների) փոխարեն Կենտրոնական բանկ են ներկայացվում հետևյալ տեղեկությունները (հաշվետվությունները).
    1) խմբի կառուցվածքը,
    2) խմբի վերջին ֆինանսական տարվա ֆինանսական հաշվետվությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար) և դրանց անկախ աուդիտորական եզրակացությունը:
85. Սույն կանոնակարգի 82-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձը հանդիսանում է Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների:
86. Սույն կանոնակարգի 82-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) Կենտրոնական բանկ չեն ներկայացվում, եթե կրիպտոակտիվներով

ծառայություններ մատուցող անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձը հանդիսանում է.

1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձ, որի համար ներկայացվում են սույն կանոնակարգով նշանակալից մասնակցություն ունեցող անձի համար պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
2) Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձ՝ բացառությամբ հաշվետու թողարկողների:

87. Սույն կանոնակարգի 86-րդ կետում սահմանված դեպքերում Կենտրոնական բանկ է ներկայացվում այդ անձանց անվանումները ներառող ցուցակ:
88. Կենտրոնական բանկը կարող է պահանջել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձից, օտարերկրյա անձի մասնաճյուղից սույն կանոնակարգի 82-րդ կետի 2-րդ ենթակետով և 83-րդ կետով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) սահմանված պարբերականությամբ ներկայացնել Կենտրոնական բանկ՝ նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված իրավաբանական անձանց մասով:
89. Եթե սույն կանոնակարգի համաձայն ներկայացման ենթակա հաշվետվությունները և տեղեկությունները հայերենով, ռուսերենով կամ անգլերենով տեղակայված են ինտերնետային կայքում, ապա հաշվետվությունների կամ տեղեկությունների փոխարեն Կենտրոնական բանկ կարող է ներկայացվել համապատասխան ինտերնետային կայքի (տնային էջի) հասցեն՝ մինչև տվյալ հաշվետվությունները կամ տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու վերջնաժամկետը: Ընդ որում, սույն կանոնակարգով սահմանված՝ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունները (տեղեկությունները) ինտերնետային կայքում (տնային էջում) տեղադրելու դեպքում իրավաբանական անձինք ապահովում են պահանջվող հաշվետվությունների (տեղեկությունների) առկայությունն առնվազն մեկ տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 19
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

90. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է ունենա գլխամասային տարածք, որտեղ տեղակայված կլինի կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գործադիր մարմինը, օտարերկրյա անձի մասնաճյուղի ղեկավարը: Ընդ որում, գլխամասային տարածքը և գործունեության այլ տարածքները պետք է լինեն առանձնացված՝ սեփականության, վարձակալության (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին, օտարերկրյա անձին պատկանող: Սույն կանոնակարգի իմաստով գործունեության տարածքը ներառում է ցանկացած տարածք, որտեղ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձն իրականացնում է որևէ գործառույթ, ներառյալ՝ փաստաթղթերի, արխիվների, սերվերների պահպանում:
91. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձն իր գործունեության տարածքի ցանկացած փոփոխության դեպքում տեղեկացնում է Կենտրոնական բանկին տվյալ վայրում գործունեություն սկսելուց կամ դադարեցնելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ՝ ներկայացնելով տարածքի հասցեն, կադաստրային կոդը և տվյալ տարածքում իրականացվելիք գործառույթների հակիրճ նկարագրությունը:

ԳԼՈՒԽ 20
ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

92. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը և ներկայացուցչությունը փոփոխությունները տեղի ունենալուց հետո տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում.
    1) Կենտրոնական բանկի կողմից գրանցման ենթակա ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները՝ համաձայն Կանոնակարգ 7/05-ի,
    2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կանոնադրությունում կատարված փոփոխությունները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը: Ընդ որում, սույն ենթակետում սահմանված կանոնադրությունների փոփոխությունները, լրացումները պետք է ունենան սույն կանոնակարգի Հավելված 29-ով սահմանված ձևի տիտղոսաթերթ:
93. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի կանոնադրությունում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.
    1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ կառավարման իրավասու մարմնի լիազոր անձի ստորագրությամբ,
    2) կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,
    3) կանոնադրության փոփոխված դրույթները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը, ինչպես նաև կանոնադրության օրինակը ներկայացված խմբագրության ռեժիմով,
    4) եթե կանոնադրության փոփոխությունը առաջացնում է լիցենզիայի, գրանցման վկայականի կամ մասնաճյուղի գործունեության թույլտվության վերաձևակերպման անհրաժեշտություն, ապա միջնորդագրում նշվում է վերաձևակերպման անհրաժեշտության վերաբերյալ, իսկ լիցենզիայի վերաձևակերպման համար ներկայացվում է նաև պետական տուրքի վճարման անդորրագիրը,
    5) եթե կանոնադրության փոփոխությունը կապված է կանոնադրական կապիտալի ավելացման հետ և այն չի իրականացվում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվի միջոցով, ապա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում ընդհանուր կապիտալի համալրումը հավաստող փաստաթուղթը,
    6) եթե կանոնադրության փոփոխությունը կապված է գործունեության վայրի փոփոխությամբ, ապա միջնորդագրում նշվում է գործունեության նոր վայրի կադաստրային կոդը և հայտարարություն այն մասին, որ գործունեության նոր տարածքը համապատասխանում է սույն կանոնակարգի 19-րդ գլխով սահմանված պահանջներին:
94. Եթե կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է ֆիրմային անվանման փոփոխությամբ, ապա, բացի սույն կանոնակարգի 93-րդ կետում նշված փաստաթղթերից Կենտրոնական բանկ է ներկայացվում նաև ֆիրմային անվանման գրանցման հայտը և այլ պահանջվող փաստաթղթեր՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 309-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների ֆիրմային անվանումների գրանցման հայտին ներկայացվող

պահանջները, հայտի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև հայտի քննարկման ու ֆիրմային անվանումների և դրա փոփոխությունների գրանցման կարգի»:

95. Փոփոխությունները գրանցվում են կամ փոփոխությունների գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, ընդ որում, կանոնադրության փոփոխության գրանցման վերաբերյալ որոշումը ձևակերպվում է գրանցման ներկայացված փոփոխության տիտղոսաթերթի վրա Կենտրոնական բանկի նախագահի էլեկտրոնային-թվային ստորագրությունը դնելու միջոցով:
96. Գրանցման վկայականի նոր օրինակը կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին տրամադրվում է կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:
97. Լիցենզիայի կամ մասնաճյուղի գործունեության թույլտվության նոր օրինակը հրապարակվում է Կենտրոնական բանկի կայքում՝ կանոնադրությունը գրանցելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 21
ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

98. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը լիցենզիա ստանալուց հետո, իսկ օտարերկրյա անձը մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության թույլտվություն ստանալուց հետո Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փոփոխությունները՝ դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում.

    1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի՝ Կենտրոնական բանկ ներկայացված՝ Օրենքի 36-րդ հոդվածով սահմանված գործունեության կանոնների փոփոխությունները,
    2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղի կամ ներկայացուցչության կամ օտարերկրյա անձի ներկայացուցչության ղեկավարների փոփոխության դեպքում՝ մասնաճյուղի, ներկայացուցչության ղեկավարների մասին տեղեկանք՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 15-ի,
    3) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկ ներկայացված տեղեկությունների փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող հայտարարագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 28-ի,
    4) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի ապակենտրոնացված գրանցամատյանում բացված հասցեների փոփոխությունների դեպքում՝ տվյալ փոփոխությունները ներառող տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի:

99. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում գործարար ծրագրի փոփոխված տարբերակը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե տեղի է ունեցել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի գործունեության ռազմավարության փոփոխություն: Վերանայված ծրագրում նշվում է ռազմավարության փոփոխության հիմնավորումը:

Հավելված 1
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը» Կանոնակարգ 7/01-ը
Հավելվածի

Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման լիցենզիա թիվ _____
Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի լրիվ ֆիրմային անվանումը՝
_____

Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին թույլատրվող ծառայությունները

---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------

Գրանցման համարը _____
Տրված՝ __ _____ ____

Սույն փաստաթղթի վավերականությունը կարող է ստուգվել www.cba.am կայքում կամ QR code-ը սկանավորելու միջոցով

Մասնաճյուղի գործունեության թույլտվություն թիվ _____
Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի լրիվ ֆիրմային անվանումը՝
_____

Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղին թույլատրվող ծառայությունները

---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------
---------- տրված է ՝-------

Գրանցման համարը _____
Տրված՝ __ _____ ____

Սույն փաստաթղթի վավերականությունը կարող է ստուգվել www.cba.am կայքում կամ QR code-ը սկանավորելու միջոցով

Հավելված 3
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Ք. ԵՐԵՎԱՆ

Գրանցված է
ՀՀ կենտրոնական բանկի
——— թվականի թիվ ———որոշմամբ

ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ թիվ ---

Համաձայն «Կրիպտոակտիվների մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների՝ սույն վկայականը տրվում է

(անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, գտնվելու վայրը)

---------- կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին առ այն, որ այն գրանցված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում:

Գրանցման համարը _____

Գրանցման ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____
Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ _____

.... 20 ... թ.

Հավելված 4
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը
Հավելվածի

Ներկայացուցչության գործունեության թույլտվություն թիվ _____
Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ներկայացուցչության լրիվ ֆիրմային անվանումը՝
_____

Գրանցման համարը _____
Տրված՝ __ _____ ____

Սույն փաստաթղթի վավերականությունը կարող է ստուգվել www.cba.am կայքում կամ QR code-ը սկանավորելու միջոցով

Հավելված 5
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը
Հավելվածի

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ին

Հարգելի _____

Մենք(ես)՝

(Դիմորդի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը)

ստեղծումը նախաձեռնող ներքոստորագրյալներս (ներքոստորագրյալս), որոշում ենք (եմ) կայացրել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի պետական գրանցման և կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու մասին:

Խնդրում ենք (եմ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին և տրամադրել ստորև նշված կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման լիցենզիա.

☐ 1 կրիպտոակտիվների առևտրային հարթակի գործարկում
☐ 2 կրիպտոակտիվների պահառություն
☐ 3 իր հաշվին կրիպտոակտիվների առուվաճառքի իրականացում
☐ 4 հաճախորդի հաշվին կրիպտոակտիվների առուվաճառքի իրականացում
☐ 5 կրիպտոակտիվներով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում
☐ 6 կրիպտոակտիվների տեղաբաշխում
☐ 7 կրիպտոակտիվների փաթեթի կառավարում
☐ 8 կրիպտոակտիվների հետ կապված խորհրդատվության տրամադրում
☐ 9 կրիպտոակտիվների փոխանցում
☐ 10 ակտիվին կցված թոքենների թողարկում

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք(եմ) գրանցման և լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝ --- էջ):

Ներկայացնում ենք (եմ) նաև կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կապի միջոցները, կոնտակտային անձի տվյալները և գործունեության տարածքի վերաբերյալ տեղեկատվություն:

Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կապի միջոցները	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային փոստի հասցե	
Կապի այլ միջոցներ	
Պաշտոնական ինտերնետային կայքի հասցե (առկայության դեպքում)	
Կոնտակտային անձի տվյալներ	
Անուն, Ազգանուն	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային փոստի հասցե	

Գործունեության տարածքի հասցեն	Գործունեության տարածքի կադաստրային կոդը	Տվյալ գործունեության տարածքում իրականացվելիք գործառույթների հակիրճ նկարագրությունը

Հավաստիացնում ենք (եմ), որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:

Հավաստիացնում ենք (եմ), որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ստեղծումը նախաձեռնող անձինք (անձ)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն (անվանում)	Անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (ՀՎՀՀ)
_____	_____	_____
_____	_____	_____

__ _____ 20___թ.

Հավելված 6
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը
Հավելվածի

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ին

Հարգելի _____
Տեղեկացնում ենք, որ

_____

(օտարերկրյա անձի անվանումը)

իրավասու կառավարման մարմինը որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղ ստեղծելու վերաբերյալ:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին տրամադրել մասնաճյուղի գործունեության թույլտվություն՝ ստորև նշված կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման համար.

☐ 1 կրիպտոակտիվների առևտրային հարթակի գործարկում
☐ 2 կրիպտոակտիվների պահառություն
☐ 3 իր հաշվին կրիպտոակտիվների առուվաճառքի իրականացում
☐ 4 հաճախորդի հաշվին կրիպտոակտիվների առուվաճառքի իրականացում
☐ 5 կրիպտոակտիվներով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում
☐ 6 կրիպտոակտիվների տեղաբաշխում
☐ 7 կրիպտոակտիվների փաթեթի կառավարում
☐ 8 կրիպտոակտիվների հետ կապված խորհրդատվության տրամադրում
☐ 9 կրիպտոակտիվների փոխանցում
☐ 10 ակտիվին կցված թոքենների թողարկում

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք գրանցման և լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը (կից՝ ____ էջ):

Ներկայացնում ենք նաև օտարերկրյա անձի կապի միջոցները, կոնտակտային անձի տվյալները և մասնաճյուղի գործունեության տարածքի վերաբերյալ տեղեկատվություն:

Օտարերկրյա անձի կապի միջոցները	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային փոստի հասցե	
Կապի այլ միջոցներ	
Պաշտոնական ինտերնետային կայքի հասցե	
Կոնտակտային անձի տվյալներ	
Անուն, Ազգանուն	
Պաշտոն	
Հեռախոսահամար	
Էլեկտրոնային փոստի հասցե	
Մասնաճյուղի հասցեն	
Մասնաճյուղի տարածքի կադաստրային կոդը	

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:

Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և դիմումի մերժմանը:

Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը և ազգանունը

_____

Ստորագրությունը _____

__ _____ 20___թ.

Հավելված 7
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ, ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն հավելվածը սահմանում է նոր ստեղծվող և գործող՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի (այսուհետ նաև՝ կազմակերպություն) երեք տարվա գործարար ծրագրի Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը:
2. Գործարար ծրագրի նպատակն է Կենտրոնական բանկ ներկայացնել կազմակերպության կողմից պլանավորված գործողությունները, ինչը Կենտրոնական բանկին հնարավորություն կտա գնահատել կազմակերպության գործունեությունը, ընտրած ռազմավարությունը, ինչպես նաև հնարավորություն կտա գնահատել կազմակերպության ռեսուրսների համապատասխանությունը պլանավորված գործունեությունն իրականացնելու համար:
3. Գործարար ծրագրի հիմքում դրվում են հետևյալ հիմնական սկզբունքները.
   1) իրատեսություն (առաջադրված նպատակների և խնդիրների իրականացման բավարար հիմնավորումների առկայություն),
   2) գնահատելիություն (կատարման արդյունքների գնահատման հնարավորություն),
   3) համահունչություն (ծրագրի առանձին բաժինների և բաժինների գլուխների միջև պատճառահետևանքային կապի, ծրագրի ընդհանուր տրամաբանական ընթացքի առկայություն),
   4) կոնկրետություն (վերնագրի՝ ըստ էության ներկայացում, վերնագրից դուրս ավելորդ տեղեկատվության բացակայություն, խնդիրների՝ ըստ էության դիտարկում),

5) այլ, նշված սկզբունքներին չհակասող սկզբունքներ:

4. Կազմակերպությունը լիցենզավորման փաստաթղթերը (օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի դեպքում՝ գործունեության թույլտվության փաստաթղթերը) Կենտրոնական բանկ ներկայացնելիս, ինչպես նաև՝ մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա փետրվարի 15-ը, Կենտրոնական բանկ է ներկայացնում առաջիկա երեք տարիների իր գործարար ծրագիրը՝ համաձայն սույն Հավելվածի Ենթահավելված 1-ի, ֆինանսական կանխատեսումները՝ համաձայն սույն Հավելվածի Ենթահավելված 2-ի: Ընդ որում, Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործարար ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը ներառվում է գործարար ծրագրի կազմում:
5. Գործարար ծրագրում ընդգրկված ֆինանսական հաշվետվությունների փաստացի և կանխատեսվող ցուցանիշները ներկայացվում են Կենտրոնական բանկ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների տրամաբանությամբ: Գործարար ծրագրին կից աղյուսակները կազմվում են ցուցանիշների ծրագրային կանխատեսումների հիման վրա: Բոլոր կանխատեսվող ցուցանիշները, բացառությամբ մակրոտնտեսական ցուցանիշների, պետք է հիմնավորված լինեն կոնկրետ հաշվարկներով և արտացոլեն գործարար ծրագրում ամրագրված քաղաքականությունը: Գործարար ծրագրի մշակման ժամանակ հիմնական կանխատեսումներն իրականացնելիս կարող են կիրառել նաև սթրես թեստեր:
6. Կազմակերպության գործարար ծրագիրը պարունակում է սույն Հավելվածի Ենթահավելված 1-ով սահմանված գործարար ծրագրի ձևի տվյալները: Գործարար ծրագիրը կարող է ներառել սույն Հավելվածի Ենթահավելված 1-ով սահմանված ծրագրի ձևի տվյալներից բացի լրացուցիչ տվյալներ, եթե լրացուցիչ տվյալները էական և հիմնավոր դեր են կատարում գործարար ծրագրում:

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԸ

Բ Ա Ժ Ի Ն I

ՆԱԽԱԲԱՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Ներկայացվում են կազմակերպության մասին ընդհանուր տեղեկություններ, այդ թվում՝ հիմնադրման ամսաթիվը (բացառությամբ՝ լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության), կազմակերպական-իրավական ձևը, մասնաճյուղերի թիվը և աշխարհագրական տեղաբաշխումը, հայեցողությամբ՝ այլ տեղեկատվություն:

Բ Ա Ժ Ի Ն II

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գ Լ ՈՒ Խ 2

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս բաժնում ներկայացվում են՝

2. Կազմակերպության ընդհանուր ռազմավարությունը, ինչպես նաև առաքելությունը՝ հեռանկարային նպատակը, որի համար գոյություն ունի կազմակերպությունը: Առաքելությունը պետք է արտացոլի կազմակերպության՝ երկարաժամկետ կտրվածքով դերը, տեղը և առանձնահատկությունները կրիպտոակտիվների շուկայում:
3. Կազմակերպության մրցակցային առավելությունները և առանձնահատկությունները, որով ընկերությունը ներկայանում է շուկային:
4. Հաճախորդներին հասանելիության եղանակները (մասնաճյուղեր, ինտերնետ, ներկայացուչություններ, դուստր կազմակերպություններ և այլն):
5. Մարկետինգային քաղաքականությունը, որով կազմակերպությունը պատրաստվում է ճանաչելի դառնալ հաճախորդներին:
6. Կատարված շուկայի ուսումնասիրության արդյունքները՝ ներառյալ գործող մրցակիցների վերլուծության արդյունքները:

Գ Լ ՈՒ Խ 3

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Այս բաժնում ներկայացվում են՝

7. Կազմակերպության կողմից ընդունված միջնաժամկետ նպատակներն ըստ առաջնահերթության: Նպատակները կարող են լինել և՛ քանակական, և՛ որակական, և՛ ընդհանրական, սակայն՝ իրատեսական և դրանց կատարման արդյունքների տեսանկյունից՝ գնահատելի (չափելի):
8. Ներկայացվում է սույն գլխում նշված նպատակների ընտրության հիմնավորումը: Եթե սույն ենթահավելվածի 7-րդ կետում նշված նպատակները վերանայվել են, ապա անհրաժեշտ է ներկայացնել դրանց վերանայման պատճառներն ու հիմնավորումը, եթե չեն վերանայվել՝ նպատակների՝ նույնը մնալու հիմնավորումը, բացառությամբ՝ կազմակերպության լիցենզիա, գործունեության թույլտվություն ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության:
9. Ներկայացվում է նաև այն ուղիները և միջոցները, որոնք կազմակերպությունը պատրաստվում է նախաձեռնել սույն գլխում նշված նպատակներին հասնելու նպատակով:

Գ Լ ՈՒ Խ 4

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս բաժնում ներկայացվում են՝

10. Կազմակերպության հիմնական գործառնությունների և ծառայությունների շրջանակը՝ պլանավորվող ժամանակաշրջանի համար: Մասնավորապես՝

1) Կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունների սխեմատիկ գծապատկերը,
2) գործունեության մեջ զգալի ծավալ կազմող գործարքների և ծառայությունների տեսակները կամ ենթատեսակները,
3) հաճախորդների հիմնական խմբերն ըստ տարածաշրջանների, ռեզիդենտության, իրավական կարգավիճակի կամ այլ չափանիշների:

ԳԼՈՒԽ 5

ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Այս բաժնում ներկայացվում են՝

11. Կազմակերպության սեփականատիրական կառուցվածքը սխեմատիկորեն: Ֆինանսական խմբի անդամ լինելու դեպքում ներկայացվում է նաև խմբի կառուցվածքը:
12. Իրավաբանական անձ հանդիսացող նշանակալից մասնակիցների, ֆինանսական խմբի անդամ լինելու դեպքում՝ նաև ֆինանսական խմբի անդամների հակիրճ գործունեության նկարագիրը:
13. Կազմակերպության ներքին կազմակերպական կառուցվածքը սխեմատիկորեն, կառուցվածքային ստորաբաժանումների և ծառայությունների անվանումներն ու հիմնական ֆունկցիաները, դրանց միջև փոխհարաբերությունները:
14. Առկայության դեպքում՝ խորհրդի կառուցվածքի նկարագրությունը, ինչպես նաև գործող/նախատեսվող հանձնաժողովների նկարագրությունը:

15. Մարդկային ռեսուրսների նկարագրությունը, ներառյալ պլանավորված փոփոխությունները՝ պլանավորվող ժամանակաշրջանի համար:

ԳԼՈՒԽ 6

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Այս բաժնում ներկայացվում են՝

16. Կազմակերպության արտաքին և ներքին միջավայրում առկա այն գործոնները և ռիսկերը, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ կազմակերպության վրա:
17. Ռիսկերի կառավարման համակարգը, որը ներառում է այն մեխանիզմների և գործիքների նկարագրությունը, որով կատարվում է ռիսկերի բացահայտումը և գնահատումը, կառավարումը և զեկուցումը ընկերության գործադիր մարմնին կամ խորհրդին:
18. Ներքին հսկողության կազմակերպման և իրականացման գործընթացը:

ԳԼՈՒԽ 7

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Այս բաժնում ներկայացվում են՝

19. Նախատեսված տեղեկատվական տեխնոլոգիաների (ծրագրային համակարգեր, տվյալների բազաներ և այլ ծրագրեր) նկարագրությունները, որոնք օգտագործվելու են ընկերության հիմնական գործառույթները կատարելու ընթացքում:
20. Գործող կազմակերպությունները ներկայացնում են նաև նախատեսվող տեղեկատվական տեխնոլոգիաների փոփոխությունները և դրանց հիմնավորումները:

ԳԼՈՒԽ 8

ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄ

21. Ներկայացվում է այն գործառույթները, որոնք նախատեսվում է պատվիրակել երրորդ անձանց: Ընդ որում, ներկայացվում է նաև այն անձանց տվյալները ում պատվիրակվում են գործառույթները, իսկ պատվիրակված անձանց նախատեսված փոփոխությունների դեպքում ներկայացվում է նաև փոփոխության հիմնավորումը:

Բ Ա Ժ Ի Ն III

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(բացառությամբ՝ կազմակերպության լիցենզիա, գործունեության թույլտվություն ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության)

Գ Լ ՈՒ Խ 9

ՆԱԽՈՐԴ ՊԼԱՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

22. Ներկայացվում է նախորդ պլանային ժամանակաշրջանի (նախորդ մեկ տարվա) 3-րդ գլխի 7-րդ կետով սահմանված նպատակների և 10-րդ գլխով սահմանված խնդիրների կատարողականի վերլուծությունը: Ներկայացվում է նպատակների և խնդիրների կատարման ընթացքը, բացահայտվում են խնդիրների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմնական պատճառները:

Բ Ա Ժ Ի Ն IV

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Գ Լ ՈՒ Խ 10

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

23. Ներկայացվում են պլանավորվող ժամանակահատվածում իրականացվելիք խնդիրները և դրանց լուծման համար նախատեսվող ուղիները: Խնդիրները պետք է լինեն խիստ կոնկրետ և դրանց կատարման արդյունքների տեսանկյունից՝ գնահատելի (չափելի): Բոլոր խնդիրները պետք է ուղղված լինեն նպատակներին, բխեն նախորդ ժամանակաշրջանի խնդիրների կատարողականից, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի թույլ և ուժեղ կողմերից, արտաքին հնարավորություններից և վտանգներից:

Բ Ա Ժ Ի Ն V

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Գ Լ ՈՒ Խ 11

ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

24. Ներկայացվում է, թե ինչ կարգով է կատարվում ծրագրի մշակման գործընթացը, ով է կատարում ծրագրի կատարողականի գնահատումը, կատարման հսկողությունը, ինչ գործընթացով է դա իրականացվում:

ԳԼՈՒԽ 12

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆԸ

(Ներկայացվում է միայն լիցենզիա ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության կողմից)

25. Ներկայացվում է նախատեսված ժամանակացույցը, ըստ որի կազմակերպությունը կարող է սկսել իր գործունեությունը: Ժամանակացույցը պետք է ներառի կազմակերպության գործունեությունը

սկսելու համար անհրաժեշտ կարևոր իրադարձությունները, օրինակ՝ լիցենզիա ստանալը, տարածքի ձեռքբերումը, հիմնական աշխատակազմի հավաքագրումը, հիմնական պայմանագրերի կնքումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և գործունեության սկիզբը:

ԳԼՈՒԽ 13

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

26. Գործարար ծրագրին կից ներկայացվում են հետևյալ աղյուսակները՝

1. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության կանխատեսումը՝ համաձայն Ենթահավելված 2-ի աղյուսակ 1-ի,
2. Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կանխատեսումը՝ համաձայն Ենթահավելված 2-ի աղյուսակ 2-ի:

27. Գործող ընկերությունների վերջին երեք տարվա ֆինանսական հաշվետվությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած անձինք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են գործունեության ողջ ժամկետի համար):
28. Հաշվետվությունների կանխատեսումները ներկայացվում են տարեկան կտրվածքով՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ:
29. Ներկայացվում են նաև կանխատեսումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունները:
30. Սթրես թեստավորում կատարած լինելու դեպքում՝ ներկայացվում են սթրես թեստավորման արդյունքները, կանխատեսումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունների ազդեցությունը ֆինանսական ցուցանիշների վրա գնահատելու նպատակով:

ԳԼՈՒԽ 14

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

(Ներկայացվում է միայն լիցենզիա, գործունեության թույլտվություն ստանալու համար դիմում ներկայացնող կազմակերպության կողմից)

31. Նկարագրվում է գործարար ծրագրի կենսունակությունը՝ մասնավորապես, ըստ կանխատեսումների ինչ ժամանակաշրջանում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կդառնա եկամտաբեր և ֆինանսական ինչ աղբյուրներից կարող է ապահովվել ընկերության գործունեությունը մինչ եկամտաբեր դառնալը:

Աղյուսակ 1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ						
	Փաստացի Արդյունք			Կանխատեսվող Արդյունք		
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ						
Տոկոսային և նմանատիպ ծախսեր						
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	-	-	-	-	-	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ						
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր						
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	-	-	-	-	-	-
Եկամուտ շահաբաժիններից						
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից						
Այլ գործառնական եկամուտներ						
Գործառնական եկամուտներ	-	-	-	-	-	-
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին						
Ընդհանուր վարչական ծախսեր						
Այլ գործառնական ծախսեր						
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)						
Շահույթ (վնաս) մինչև հարկումը	-	-	-	-	-	-
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)						

Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	-	-	-	-	-	-
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)						
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ (վնաս)						
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ	-	-	-	-	-	-

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ						
	Փաստացի արդյունք			Կանխատեսվող արդյունք		
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ	խնդրում ենք մուտքագրել ֆինանսական տարին այստեղ
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոց-ներ և դրանց համարժեքներ						
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակեր-պությունների նկատմամբ						
Պահանջներ հաճախորդ-ների նկատմամբ						
Ֆինանսական ակտիվներ						
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտա-լում						
Հիմնական միջոցներ						
Ոչ նյութական ակտիվներ						
Հետաձգված հարկային ակտիվներ						
Այլ ակտիվներ						
Ընդամենը՝ ակտիվներ	-	-	-	-	-	-
Պարտավորություններ և սեփական կապիտալ						
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսա-կան կազմակերպություն-ների նկատմամբ						
Պարտավորություններ հա-ճախորդների նկատմամբ						
Հետաձգված հարկային պարտավորություններ						
Պահուստներ						
Այլ պարտավորություններ						
Ընդամենը՝ պարտավորություններ	-	-	-	-	-	-
Կանոնադրական կապիտալ						
Էմիսիոն եկամուտ						
Պահուստներ						
Չբաշխված շահույթ (վնաս)						
Կապիտալի այլ տարրեր						
Ընդամենը՝ սեփական կապիտալ	-	-	-	-	-	-

Հավելված 8

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի կանոնադրության տիտղոսաթերթ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է	ԳՐԱՆՑՎԱԾ Է

(ընկերության իրավասու մարմնի անվանումը)	ՀՀ կենտրոնական բանկում
--/--/----թ. թիվ ---------որոշմամբ	
----------	ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
(իրավասու անձի պաշտոնը)	----------
----------	(ստորագրություն)
(անուն, ազգանուն, ստորագրություն)	

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

_____

Ընկերության (ընկերության մասնաճյուղի) լրիվ անվանումը

Հավելված 9
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ԴԻՄՈՒՄ

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կենտրոնական բանկի նախագահ

_____-ին

Հարգելի _____

Խնդրում ենք ----------
(կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) լրիվ անվանումը)

համար բացել կուտակային հաշիվ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կանոնադրական կապիտալի համալրում իրականացնելու համար:

Վճարման հանձնարարական տալու իրավունք ունի (ունեն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

_____
(անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ, ստորագրություն)

Խնդրում ենք Կենտրոնական բանկի կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցման և լիցենզավորման կամ գրանցման և լիցենզավորման մերժման, կանոնադրության փոփոխության գրանցման կամ գրանցման մերժման դեպքում Կենտրոնական բանկում բացված կուտակային հաշվին առկա միջոցները փոխանցել հետևյալ հաշվին

_____
(բանկի անվանում, հաշվի համար)

(Դիմումատուի հայեցողությամբ այլ նշումներ)

Կազմակերպության (հիմնադրվող կազմակերպության) իրավասու անձի (անձանց) անունը, ազգանունը, ստորագրությունը

___ _____ 20___ թ.

Հավելված 10
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ
Կրիպտոակտիվների հասցեների վերաբերյալ

Ապակենտրոնացված գրանցամատյանում բացված հասցեն	Կրիպտոակտիվի անվանումը	Ի՞նչ նպատակով է օգտագործվում կրիպտոակտիվի հասցեն (հաճախորդների միջոցների պահառություն, սեփական միջոցների պահպանություն)

Հավելված 11
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավաբանական անձ հանդիսացող բաժնետերեր (մասնակիցներ)						
Ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը		Պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, կապի միջոցները	Բաժնետոմսերի (բաժնեմասերի)		Բաժնետոմսերով (բաժնեմասով) հավաստվող ձայների	
			քանակը	տոկոսային մեծությունը	քանակը	տոկոսային մեծությունը
2. Ֆիզիկական անձ հանդիսացող բաժնետերեր (մասնակիցներ)						
Անունը, ազգանունը, բնակության վայրը		Անձնագրի սերիան և համարը	Բաժնետոմսերի (բաժնեմասերի)		Բաժնետոմսերով (բաժնեմասով) հավաստվող ձայների	
			քանակը	տոկոսային մեծությունը	քանակը	տոկոսային մեծությունը

Հավելված 12

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Փոխկապակցվածության հիմքը (*Այստեղ նշվում են այն անձի մասին տվյալներ, որի միջոցով իրավաբանական անձը հանդիսանում է փոխկապակցված անձ)*

Անձի անվանումը (անունը, ազգանունը, անձնագրի տվյալներ) _____

2. Փոխկապակցված իրավաբանական անձի (կազմակերպության) տվյալներ Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն, ընդ որում՝ սույն տեղեկանքի լրացման ժամանակ միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները։)

1) Անվանումը _____

2) Գտնվելու վայրը _____

3) Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____ համարը _____
օր/ամիս/տարի

4) Փոխկապակցվածության տեսակ. _____

3. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի նշանակալից մասնակիցների վերաբերյալ (ԿԲ կողմից կարող են լրացուցիչ պահանջվել 3.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները)

1) Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք.

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

2) Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք

Անունը, ազգանունը, անձնագրի համարը,	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

4. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի ղեկավարների (խորհրդի նախագահի և անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ (ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել, որ կազմակերպության ղեկավարների համար լրացվի նաև կանոնակարգ 7/05-ի Հավելված 2-ը)

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները		Պաշտոնը		Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)

5. Տեղեկություններ փոխկապակցված անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ

Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, իրական շահառու հանդիսացող անձանց անունը, ազգանունը, անձնագրի տվյալները

6. Այլ տեղեկատվություն

1) Արդյո՞ք ներկայացվում է նաև սույն կանոնակարգի 20-րդ կետի 6-րդ ենթակետով պահանջված ֆինանսական հաշվետվությունները:

☐ Այո
☐ Ոչ, հաշվետվությունները չեն ներկայացվում համաձայն սույն կանոնակարգի 22-րդ կետի

2) Արդյո՞ք փոխկապակցված իրավաբանական անձն ունի 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ:

☐ Այո (ներկայացնել մանրամասները)
☐ Ոչ

3) Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

7. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:
Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 13

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Փոխկապակցվածության հիմքը (Այստեղ նշվում է այն անձի մասին տվյալներ, որի միջոցով ֆիզիկական անձը հանդիսանում է փոխկապակցված անձ)	
Անձի անվանումը, (անունը, ազգանունը, անձնագրի տվյալները)	_____
2. Փոխկապակցված ֆիզիկական անձի տվյալներ (Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 36-րդ կետի համաձայն, ընդ որում՝ սույն տեղեկանքի լրացման ժամանակ միևնույն ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը և չափահաս երեխաները)	
1) Անունը, ազգանունը	_____
2) Բնակության վայրը	_____
3) Անձնագրի տվյալներ	_____
4) Փոխկապակցվածության տեսակ	
2. Տեղեկություններ փոխկապակցված անձի հետ փոխկապակցված իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ.	
Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, իրական շահառու հանդիսացող անձանց անունը, ազգանունը, անձնագրի տվյալները

3. Այլ տեղեկատվություն

1) Արդյո՞ք ֆիզիկական անձն ունի 30 և ավելի օր ժամկետանց (չմարված) պարտավորություններ:

☐ Այո (ներկայացնել մանրամասները)

☐ Ոչ

2) Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն:

4. Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____
օր/ամիս/տարի

Հավելված 14
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձանց, պետությունների և միջազգային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ՝						
Կազմակերպության (պետության) անվանումը		Գտնվելու վայրը		Մասնակցության չափը (դրամով)		Մասնակցության չափը (%)
2.Օտարերկրյա անձի կանոնադրական կապիտալում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկություններ՝						
Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները		Բնակության վայրը		Մասնակցության չափը (դրամով)		Մասնակցության չափը (%)
3. Օտարերկրյա անձի իրավաբանական անձ հանդիսացող անուղղակի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ (Կենտրոնական բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ)՝						
Կազմակերպության անվանումը		Գտնվելու վայրը		Նշվում են այն անձանց մասին հետևյալ տվյալները, որի միջոցով իրավաբանական անձը հանդիսանում է անուղղակի նշանակալից՝ անձի անվանումը կամ անունը, ազգանունը և անձնագրի տվյալները)		Նշվում է «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 34-րդ մասի այն ենթակետը, որի հիմքով անձը հանդիսացել է անուղղակի նշանակալից մասնակից:

4. Օտարերկրյա անձի ֆիզիկական անձ հանդիսացող անուղղակի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ (Կենտրոնական բանկի կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ)

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները		Բնակության վայրը		Նշվում են այն անձանց մասին հետևյալ տվյալներ, որի միջոցով ֆիզիկական անձը հանդիսանում է անուղղակի նշանակալից՝ անձի անվանումը կամ անունը, ազգանունը և անձնագրի տվյալները)		Նշվում է «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 34-րդ մասի այն ենթակետը, որի հիմքով անձը հանդիսացել է անուղղակի նշանակալից մասնակից:

5. Արդյո՞ք սույն տեղեկանքում նշված անձինք ունեն 30 օր և ավելի ժամկետանց/չմարված պարտավորություններ.

☐ Այո (ներկայացնել մանրամասները)
☐ Ոչ

6. Արդյո՞ք բացակայում են «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը.

☐ Այո
☐ Ոչ (ներկայացնել մանրամասները)

7.Հավաստիացնում ենք, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում ենք, որ որևէ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն ենք՝ մեր կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____
օր/ամիս/տարի

Հավելված 15
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը»
Կանոնակարգ 7/01-ը Հավելվածի

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

----------ին

Հարգելի ----------

Ներկայացնում ենք սույն տեղեկանքում նշված անձի վերաբերյալ տեղեկությունները:

Տեղեկանք
Մասնաճյուղի և ներկայացուցչության ղեկավարների վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե տեղեկանքում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Ֆինանսական կազմակերպության վերաբերյալ տվյալները (այստեղ նշվում են այն կազմակերպության տվյալները, որի մասնաճյուղի կամ ներկայացուցչության ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1) Ֆինանսական կազմակերպության անվանումը և կոդը(առկայության դեպքում)
2) Ֆինանսական կազմակերպության տեսակ ○ բանկ ○ վարկային կազմակերպություն ○ ապահովագրական ընկերություն ○ ներդրումային ընկերություն ○ ֆոնդի կառավարիչ ○ վճարահաշվարկային կազմակերպություն ○ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձ ○ օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ներկայացուցչություն

3) Նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:
2. Անձնական տվյալներ
1) Անուն, ազգանուն, հայրանուն
2) Սեռ՝ ○ արական ○ իգական
3) Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
4) Ծննդավայր
5) Քաղաքացիություն
6) Նշեք՝ ○ Անձնագրի տվյալները ○ Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում) ○ Հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)
7) Նշեք՝ ○ Հանրային ծառայության համարանիշը ○ Կիրառելի չէ
8) Նշեք՝ ○ Հաշվառման վայր, ○ Փաստացի բնակության վայր
9) Նշեք հեռախոսահամար ○ բջջային ○ տնային
10) Էլեկտրոնային փոստի հասցե
11) Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները, Անուն, ազգանուն, հայրանուն Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)
3.Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

1)

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը(--թ-ից մինչև --թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը	Միջազգային որակավորմա մակարդակը

2) Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները. (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից)

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

10. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված տարրերի հանրագումարն է՝ սույն կանոնակարգի 12-րդ և 13-րդ կետերով սահմանված նվազեցումներն ու ճշգրտումները կատարելուց հետո:

11. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ընդհանուր կապիտալի կազմում ընդգրկվում են հետևյալ տարրերը.

1) ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսերը, բաժնեմասերը կամ փայերը (այսուհետ՝ սովորական բաժնետոմս) հետևյալ արժեքով՝ անվանական արժեքի և սովորական բաժնետոմսերից էմիսիոն եկամտի (տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի դրական տարբերություն) գումարից նվազեցրած զեղչը (տեղաբաշխված բաժնետոմսերի վաճառքի գնի և անվանական արժեքի բացասական տարբերություն),
2) չբաշխված շահույթը կամ վնասը, ընդ որում, չբաշխված շահույթը հաշվարկում ներառվում է սույն կանոնակարգի Հավելված 1-ի համաձայն,
3) այլ համապարփակ եկամտի տարրերը և կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն հաշվարկված կապիտալում հաշվառվող պահուստները:

12. Սույն կանոնակարգի 11-րդ կետի համաձայն հաշվարկված մեծությունը նվազեցվում է.

1) Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կողմից թողարկված այն սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի չափով, որոնք

ա. հետ են գնվել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կողմից,
բ. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, որևէ իրավական փաստաթղթի հիման վրա, պարտավոր է կամ կարող է պարտավորվել ձեռք բերել հետագայում (երկար դիրք), բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հետգնման դեպքերի: Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կարող է սույն պարբերությամբ որոշված սովորական բաժնետոմսերի անվանական արժեքից հանել նույն բաժնետոմսերի գծով կարճ դիրքերը (անվանական արժեքով), եթե կարճ դիրքի դեպքում գործընկերոջ հետ կապված վարկային ռիսկը բացակայում է (երբ առկա է գործընկերոջ պարտավորության կատարումը երաշխավորող երաշխիքային հիմնադրամ կամ կենտրոնացված գործակալ (CCP)), և եթե տվյալ բաժնետոմսերի գծով երկար և կարճ դիրքերը հաշվառվում են նույն մեթոդով, մասնավորապես՝ միաժամանակ առևտրային պորտֆելում կամ ոչ առևտրային պորտֆելում,

2) տրամադրված հետևյալ փոխառությունների հաշվեկշռային արժեքի չափով.

ա. երկարաժամկետ ստորադաս փոխառություններ, ընդ որում, սույն ենթակետի իմաստով՝ երկարաժամկետ ստորադաս փոխառություն է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այն ստորադաս փոխառությունը, որը տրամադրվել է առնվազն հինգ տարի ժամկետով,

բ. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի հիմնական գործունեության շրջանակներից դուրս կամ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի բաժնետերերին կամ փոխկապակցված անձանց տրամադրված փոխառություններ:

3) Ոչ նյութական ակտիվների և դրանց օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ), դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի (այդ թվում՝ այլ համապարփակ եկամտում գրանցված վերագնահատման արդյունքը) չափով, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված ակտիվների:

4) Ծրագրային ապահովումների և դրանց օգտագործման իրավունքների, տեղեկատվական և կիբեռանվտանգության ապահովման համար ներդրվող լուծումների (օրինակ՝ կրիպտոգրաֆիայի, թոքենիզացիայի), առանց շփման տեխնոլոգիաների ծրագրերի (օրինակ՝ ՔՅՈՒԱՐ, ԷՆԷՖՍԻ), հեռահար նույնականացման տեխնոլոգիաների ծրագրերի, զեղծարար գործողությունների բացահայտման ծրագրերի, ամպային ծառայությունների, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կիրառվող ստանդարտների և դրանց համապատասխանության սերտիֆիկացման (այսուհետ՝ Ծրագրային ակտիվների) գծով ոչ նյութական ակտիվների, դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքների (այդ թվում՝ այլ համապարփակ եկամտում գրանցված վերագնահատման արդյունքը)՝ ընդհանուր կապիտալի տարրերի հանրագումարի՝ 50 տոկոսը գերազանցող գումարի չափով: Ընդ որում, սույն ենթակետով սահմանված հաշվարկի ժամանակ ընդհանուր կապիտալի տարրերի հանրագումարը նվազեցվում է Ծրագրային ակտիվների արժեքի վերագնահատման արդյունքում ձևավորված այլ համապարփակ եկամտի չափով:

5) Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքի և դրանց հետ կապված հետաձգված հարկային պարտավորությունների (հարկային ակտիվից զուտացվող) հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով: Սույն ենթակետի իմաստով, հետաձգված հարկային ակտիվները այն հարկային ակտիվներն են, որոնք առաջացել են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետով սահմանված կարգով իրականացված գործունեության արդյունքներով առաջացած հարկային վնասները այդ վնասների առաջացման հարկային տարվան հաջորդող հինգ հարկային տարիների համախառն եկամտից նվազեցվող տարրերի կազմում ներառելու հետևանքով:

6) այլ կազմակերպությունների կանոնադրական կապիտալում կատարված ներդրման հաշվեկշռային արժեքի չափով՝ հաշվի առնելով սույն կետի 7-րդ ենթակետով սահմանված դեպքը:

7) բանկերի, այլ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ներդրումային ընկերությունների, վճարահաշվարկային կազմակերպությունների, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների կանոնադրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում (այսուհետ՝

ֆինանսական կազմակերպություններ) կատարված այն ներդրումները, որոնց արդյունքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը նշված ֆինանսական կազմակերպության կապիտալում ձեռք է բերում 100 տոկոս մասնակցություն, և ներդրումը կատարվել է այդ կազմակերպությունը հետագայում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին միացնելու նպատակով, և Կենտրոնական բանկը տեղեկացվել է այդ նպատակի մասին, իրենց հաշվեկշռային արժեքի չափով նվազեցվում են ներդրումը կատարելու պահից 6 ամիս հետո:

13. Սույն կանոնակարգի 11-րդ կետի համաձայն հաշվարկված մեծությունը ճշգրտվում է.
   1) իրական արժեքով չհաշվառվող ակտիվների/պարտավորությունների գծով ձևավորված դրամական հոսքերի, ինչպես նաև կանխատեսվող դրամական հոսքերի հեջավորման պահուստն ապաճանաչելու միջոցով, ընդ որում, դրական մեծությունը նվազեցվում է, իսկ բացասականը՝ գումարվում,
   2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի սեփական վարկային ռիսկի փոփոխության արդյունքում իրական արժեքով հաշվառվող պարտավորությունների իրական արժեքի փոփոխությամբ պայմանավորված չիրացված շահույթը և վնասն ապաճանաչելու միջոցով, ընդ որում, դրական մեծությունը նվազեցվում է, իսկ բացասականը՝ գումարվում:

ԳԼՈՒԽ 5.
ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՖԻՔՍՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

14. Սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկման նպատակով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ֆիքսված ծախսերը հաշվարկվում են նախորդ հաշվետու տարվա (եթե սույն գլխով այլ բան սահմանված չէ) տարեկան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, մասնավորապես՝ անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա, իսկ եթե աուդիտորական եզրակացությունը բացակայում է, ապա չորրորդ եռամսյակի՝ Կենտրոնական բանկ ներկայացված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

15. Եթե սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկման նպատակով ֆիքսված ծախսերի որոշման համար կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կողմից օգտագործվել են անկախ աուդիտորական եզրակացությամբ չհաստատված ֆինանսական հաշվետվությունների տվյալները, որից հետո անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները հասանելի են դարձել, ապա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը պարտավոր է անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա վերահաշվարկել ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի հաշվարկման համար օգտագործված ֆիքսված ծախսերի մեծությունը:

16. Այն դեպքում, երբ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը դեռևս 12 ամիս գործունեություն չի ծավալել, սակայն մեկ ամիս և ավել գործունեություն է ծավալել, ապա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը նախորդ հաշվետու տարվա ֆիքսված ծախսերի մեծությունը որոշելու համար
   1) նորմատիվի հաշվարկման պահին հասանելի ֆինանսական հաշվետվություններում ներառված ֆիքսված ծախսերի մեծությունը բաժանում է այն ամիսների քանակի վրա, որոնց համար կազմված են տվյալ ֆինանսական հաշվետվությունները,
   2) սույն կետի 1-ին ենթակետի հաշվարկի արդյունքում ստացված ֆիքսված ծախսերի մեծությունը բազմապատկվում է 12-ով:

17. Այն դեպքում, երբ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը մեկ ամսից պակաս է գործունեություն ծավալել, այդ դեպքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը

ֆիքսված ծախսերի մեծությունը որոշելու համար հիմք է ընդունում առաջին հաշվետու տարվա համար պլանավորված ֆիքսված ծախսերը:

18. Ֆիքսված ծախսերի մեծությունը հետևյալ ծախսերի հանրագումարն է.

1) աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ,
2) գործունեության տարածքի շահագործման ծախս, այդ թվում՝ վարձակալական վճարներ,
3) ապահովագրական վճարներ (այդ թվում՝ կիբեռ ռիսկերի (սպառնալիքների), մասնագիտական պատասխանատվության, գույքի ապահովագրության և այլ ռիսկերի ապահովագրման համար),
4) արտաքին ծառայություններ մատուցող անձանց վճարներ (այդ թվում՝ աուդիտորական, հաշվապահական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների ստացման ծախսեր),
5) առևտրային հարթակներին վճարվող մասնակցության պարբերական վճարներ՝ առևտրային հարթակներում գործարքներ կնքելու համար,
6) սերվերների վարձակալության, Ծրագրային ակտիվների, կիբեռանվտանգության մշտական ծառայությունների դիմաց վճարներ,
7) տվյալների պահուստային կրկնօրինակների և վերականգման (backup) համար պարբերական վճարներ,
8) տեղեկատվական անվտանգության սերտիֆիկացման պահպանման և թարմացման վճարներ կամ այլ տեղեկատվական անվտանգության ստանդարտների պահպանման ծախսեր,
9) բանկային, արժեթղթերի և կրիպտոակտիվների հաշիվների սպասարկման, պահառության հետ կապված վճարներ,
10) մաշվածության կամ ամորտիզացիոն մասհանումներ,
11) պետական տուրքեր,
12) վարկերի, փոխառությունների, այդ թվում՝ պարտքային գործիքների մարմանն ուղղված ծախսեր (մայր գումարի, տոկոսի, միջնորդավճարի վճարում),
13) հարկային ծախսեր (ծախսերի մեծությունը որոշող արտառոց, չկրկնվող, չնախատեսված տարրերը հաշվարկին չեն մասնակցում),
14) սույն կետում չնշված այլ վարչական ծախսեր:

19. Սույն կանոնակարգի 18-րդ կետի 2-14-րդ ենթակետերում նշված ծախսերի հաշվարկի մեջ չեն ներառվում այդ ծախսերին առնչվող չկրկնվող և չնախատեսված ծախսերը:

20. Եթե ընթացիկ տարվա ընթացքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գործունեությունն էական փոփոխություն է կրել, ապա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը պարտավոր է ընթացիկ տարվա ֆինանսական հաշվետվությունների հիման վրա սույն կանոնակարգով սահմանված ֆիքսված ծախսերը (ընթացիկ տարվա անցած ամիսների ֆիքսված ծախսերի թվաբանական միջին*12) վերահաշվարկել և վերանայել վերջին հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը: Սույն կետի իմաստով էական փոփոխություն է համարվում, եթե կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ընթացիկ տարվա ընդհանուր ծախսերի՝ տվյալ տարվա համար կանխատեսված մեծությունն առնվազն 30%-ով փոփոխվել է:

ԳԼՈՒԽ 6.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ ԿԱՐՈՂ Է ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉՎԵԼ

21. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը սույն կանոնակարգով սահմանված նվազագույն չափից 10 և ավելի տոկոս նվազելու դեպքում կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման լիցենզիան կարող է ուժը կորցրած ճանաչվել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԻ ՇԱՀՈՒՅԹԻ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի չբաշխված շահույթը ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնասի և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնասի դրական հանրագումարն է:

2. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի չբաշխված շահույթը ներառվում է ընդհանուր կապիտալի կազմում՝ սույն հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված պահանջը:

3. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի չբաշխված շահույթը ընդհանուր կապիտալի կազմում ներառվում է հետևյալ բանաձևով հաշվարկված չափով՝

Շ = Շահույթ - ՎՀՇ

որտեղ՝
Շ-ն – ընդհանուր կապիտալի կազմում ներառվող չբաշխված շահույթի մեծությունն է,
Շահույթ-ը – ընդհանուր կապիտալի հաշվարկման պահի դրությամբ չբաշխված շահույթն է,
ՎՀՇ-ն – տվյալ տարվա ընթացքում վճարման ենթակա հավանական շահաբաժինների չափն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՎՀՇ = Max ((Շահույթ + ՇԲ) * Բաշխման դրույք – ՇԲ ; 0),

որտեղ՝
ՇԲ –ն – տվյալ տարվա ընթացքում արդեն վճարված շահութաբաժինների չափն է (առկայության դեպքում),

Բաշխման դրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Բաշխման դրույք = Max (Դ-1 ; (Դ-1 + Դ-2 + Դ-3)/3),

որտեղ՝
Դ-i (i=1,2,3) – տվյալ տարվան անմիջապես նախորդող i-րդ տարվա Բաշխման դրույքն է, որը ցույց է տալիս, թե i-րդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի շահույթի (նախորդող տարվա վերջին օրվա դրությամբ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի չբաշխված շահույթի և տվյալ տարվա զուտ շահույթի գումարի) որ մասն է փաստացի վճարվել շահութաբաժինների տեսքով:

4. Այն դեպքում, երբ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կողմից շահութաբաժնի բաշխումից հետո գումարը մինչև տվյալ բաշխման օրացուցային տարվա ավարտն ուղղվել է կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի ընդհանուր կապիտալի տարր(եր)ի (բացառությամբ՝ չբաշխված շահույթի կամ վնասի) համալրմանը, ապա սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված բաշխման դրույքի հաշվարկում փաստացի վճարված շահութաբաժնի գումարից տվյալ գումարը նվազեցվում է:

30 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 229-Ն

«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց մասնաճյուղերի ղեկավարների գրանցման կարգը» կանոնակարգ 7/05-ը սահմանելու մասին *

Նպատակ ունենալով սահմանել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցման ենթակա ղեկավարների ցանկը, ղեկավարների գրանցման, գրանցումը մերժելու և գրանցումից հանելու կարգը,

հիմք ընդունելով «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 87-րդ հոդվածը, 93-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել «Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց մասնաճյուղերի ղեկավարների գրանցման կարգը» կանոնակարգ 7/05-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. դեկտեմբերի 30-ին (ՀՀԳՏ, 21.01.2026):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 229-Ն որոշմամբ

«ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 7/05

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց (այսուհետ նաև՝ օտարերկրյա անձ) մասնաճյուղերի՝ Կենտրոնական բանկում գրանցման ենթակա ղեկավարների ցանկը, ղեկավարների գրանցման, գրանցումը մերժելու և գրանցումից հանելու կարգը:
2. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի ղեկավարների կամ նրանց կազմի փոփոխությունների գրանցման վերաբերյալ սույն կանոնակարգով սահմանված տեղեկանքները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված՝ https://www.cba.am/hy/registration-of-managers/ ինտերնետային կայքում նախատեսված համակարգի միջոցով՝ առցանց ռեժիմով տվյալները հայերենով մուտքագրելով և սույն կանոնակարգով պահանջվող այլ փաստաթղթերը ամրակցելով համակարգում նշված դաշտում՝ տվյալ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի ղեկավարների միջնորդագրերը հաստատելու իրավասություն ունեցող պատասխանատու աշխատակցին Կենտրոնական բանկի կողմից տրամադրված մուտքի տվյալների (անվան և ծածկագրի) միջոցով:
3. Լիցենզիայի կամ մասնաճյուղի գործունեության համար դիմող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կամ օտարերկրյա անձի մասնաճյուղի ղեկավարների գրանցման վերաբերյալ միջնորդագրերը և տվյալ գործընթացի շրջանակներում սույն կանոնակարգով պահանջվող այլ փաստաթղթերը ներկայացվում են էլեկտրոնային կրիչով, ընդ որում՝ ղեկավարների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով, իսկ սույն կանոնակարգով պահանջվող այլ փաստաթղթերը՝ «Փի Դի Էֆ» ֆորմատով:
4. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև ի լրումն ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում կից միջնորդագրով (դիմումով)՝ կառավարման իրավասու մարմնի կողմից ստորագրված: Կենտրոնական բանկ ներկայացվող միջնորդագրում (դիմումում), բացառությամբ սույն կանոնակարգի հավելվածներով սահմանված միջնորդագրերի ձևերի, միջնորդագիրը (դիմումը) ստորագրող անձը նշում է, որ կից ներկայացվող փաստաթղթերն ու տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական և գիտակցում է, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը կարող է հանգեցնել միջնորդագրի (դիմումի) մերժմանը:
5. Սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը ներկայացուցչի միջոցով ներկայացնելու դեպքում, ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրված լիազորագիրը:

6. Էլեկտրոնային եղանակով ներկայացվող միջնորդագրի (դիմումի) ֆայլի անվանումը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի անվանումը	գծիկ	Փաստաթղթի տեսակը	գծիկ	Փաստաթղթի բովանդակությունը (12 տառի սահմաններում)	գծիկ	ամսաթիվ՝ օօաատտ ֆորմատով	կետ	ֆայլի հապավումը

7. Օտարալեզու փաստաթղթերը ներկայացվում են կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված, նոտարական կարգով վավերացված կամ լիցենզավորված թարգմանչի կողմից թարգմանված հայերեն թարգմանության հետ, ընդ որում՝ հայերեն և օտարալեզու փաստաթղթերի միջև հակասության կամ անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին: Օտարալեզու այն փաստաթղթերը, որոնց բնօրինակը անգլերեն կամ ռուսերեն է, կարող են ներկայացվել առանց թարգմանության, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական բանկը պահանջում է դրանց հայերեն թարգմանությունները:
8. Սույն կանոնակարգի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերում ոչ էական թերությունների (վրիպակներ, ոչ իրավական բնույթի անճշտություններ, թվաբանական սխալներ կամ նման այլ բացթողումներ) առկայության դեպքում թերությունների մասին Կենտրոնական բանկը տեղեկացնում է դիմումը ներկայացրած անձին և Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որոշումը կայացվում է այդ թերությունները վերացնելուց հետո: Փաստաթղթերի կրկին թերի ներկայացումը կարող է հիմք հանդիսանալ միջնորդագրի (դիմումի) մերժման համար:
9. Սույն կանոնակարգով սահմանված ղեկավարների գրանցման համար «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված ժամկետների հաշվարկն սկսվում է բոլոր պահանջվող փաստաթղթերը պատշաճ ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու պահից:
10. Եթե սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով ներկայացված տեղեկատվությունը մինչև համապատասխան գործընթացով որոշման կայացումը փոխվել է, ապա տեղեկատվության փոփոխության տեղի ունենալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, փոփոխված փաստաթուղթը պետք է ներկայացվի Կենտրոնական բանկ:
11. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգով պահանջվող տեղեկությունների և հաշվետվությունների պարզաբանման և մեկնաբանման կարիք ունեցող կետերի վերաբերյալ, ինչպես նաև առանձին վերլուծական կամ վերահսկողական նպատակներից ելնելով, կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և պարզաբանումներ:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

    1) **Ղեկավար**՝ Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի ղեկավար համարվող անձ, ինչպես նաև սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված անձինք,
    2) **ֆինանսական վիճակի վատթարացում**՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 227-Ն որոշմամբ հաստատված «Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի գրանցումն ու լիցենզավորումը,

օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի և ներկայացուցչության գործունեության թույլտվության տրամադրումը, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը» կանոնակարգ 7/01-ով սահմանված դեպքերից որևէ մեկը,

3) **ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար**՝ անձ, որն առանց համապատասխան ղեկավար պաշտոնում Կենտրոնական բանկում գրանցման իրականացնում է այդ ղեկավարի պարտականությունները և որի վրա տարածվում են Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները:

13. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն «Կրիպտոակտիվների մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14. Անկախ կազմակերպաիրավական տեսակից՝ Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձինք պետք է ունենան կիբեռանվտանգության համար պատասխանատու անձ և ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ: Ընդ որում, ռիսկերի կառավարման գործառույթի համար պատասխանատու անձը կարող է համատեղ իրականացնել նաև կիբեռանվտանգության համար պատասխանատու անձի պարտականությունները:
15. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը պետք է ունենա և Կենտրոնական բանկ ներկայացնի կառավարման իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին կանոնակարգ, որով առնվազն սահմանվում է ղեկավարների և ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատար անձանց՝ Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերը ստուգելու, ինչպես նաև սույն կանոնակարգով ղեկավարների գրանցման համար սահմանված չափանիշներին համապատասխանությունը ստուգելու գործընթացները և դրանց նկատմամբ սահմանված պահանջների պահպանման մեխանիզմները: Սույն կետով սահմանված ներքին կանոնակարգը կարող է ներառել նաև ղեկավարների և ղեկավարների ժամանակավոր պաշտոնակատար անձանց որակավորման՝ մասնագիտական գիտելիքը հավաստող չափանիշներ:

ԳԼՈՒԽ 4
ԳՐԱՆՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

16. Կենտրոնական բանկում գրանցման ենթակա ղեկավարներն են.

1) Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 10-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող անձի տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամները (խորհուրդ ձևավորելու դեպքում), գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, ներքին աուդիտի ղեկավարը, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավարը (այսուհետ՝ ներքին դիտարկումների մարմնի ղեկավար), ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձը, առկայության դեպքում՝ կիբեռանվտանգության համար պատասխանատուն անձը,

2) Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերով սահմանված ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամները (խորհուրդ ձևավորելու դեպքում), գործադիր մարմնի ղեկավարը և անդամները, ներքին դիտարկումների մարմնի ղեկավարը,
3) Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամները (խորհուրդ ձևավորելու դեպքում), գործադիր մարմնի ղեկավարը և անդամները,

17. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, օտարերկրյա անձի մասնաճյուղի ղեկավարը Կենտրոնական բանկում գրանցվելու համար պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.
1) ունենա բարի համբավ, ազնվություն, անաղարտություն,
2) ունենա բավարար կրթություն, հմտություններ և փորձառություն, անկախ որոշումներ կայացնելու ունակություն, պատկերացնի ընկերության գործունեության բիզնես մոդելը, միջավայրը, իր դերն ու պարտականությունները՝ տվյալ պաշտոնին համապատասխանելու համար:

18. Ղեկավարների գրանցումը ներառում է՝
1) թեկնածուի Օրենքի պահանջներին և սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված չափանիշներին համապատասխանության գնահատում,
2) թեկնածուի հետ հարցազրույցի անցկացում՝ սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված չափանիշներին վերջինիս համապատասխանությունը ստուգելու նպատակով, բացառությամբ սույն կանոնակարգի 21-րդ կետով սահմանված դեպքերի:

19. Անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխությունները գրանցելու համար կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
1) անձին որպես ղեկավար գրանցելու կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին միջնորդագիրը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,
2) ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,
3) ոչ ռեզիդենտ կամ այլ երկրի քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթուղթ և իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրի իրավասու մարմնի (դատական, վարչական կամ այլ իրավասու մարմին) կողմից տրված տեղեկանք, քաղվածք կամ այլ փաստաթուղթ, որը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին, որ դիմելու պահին անձը դիտավորությամբ կատարված հանցագործության համար չունի օրենքով սահմանված կարգով չմարված կամ չվերացված դատվածություն, և անձի նկատմամբ չկա հարուցված սնանկության վարույթ, կամ անձը դատարանի կամ այլ իրավասու մարմնի վերջնական որոշմամբ չի ճանաչվել սնանկ: Ընդ որում, սնանկ ճանաչված չլինելու հավաստման փոխարեն կարող է ներկայացվել սնանկ ճանաչված չլինելու մասին հայտարարություն, որը կատարվել է ոչ ռեզիդենտ անձի կողմից իրավասու դատական կամ վարչական մարմնի առջև կամ նոտարի մոտ՝ իր ռեզիդենտության կամ քաղաքացիության երկրում,
4) կառավարման իրավասու մարմնի որոշումը ղեկավարի նշանակման կամ ղեկավարների կազմում փոփոխություն կատարելու մասին,
5) հիմնավորումներ կամ վերլուծություններ ղեկավարի կողմից համապատասխան պարտականությունները կատարելու ունակության, արդյունավետ գործունեություն իրականացնելու հնարավորության, ինչպես նաև սույն կանոնակարգով ղեկավարների գրանցման համար սահմանված չափանիշներին համապատասխանության մասին:

Հիմնավորումները և վերլուծությունները պետք է հնարավորություն տան Կենտրոնական բանկին համակողմանի կերպով գնահատել ղեկավարի՝ գրանցման համար սահմանված չափանիշներին համապատասխանությունը:

20. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 18-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հարցազրույցի անցկացման օրվա վերաբերյալ նախապես տեղեկացնում է թեկնածուին:
21. Սույն կանոնակարգի համաձայն ղեկավարներին գրանցելիս թեկնածուները հարցազրույցի կարող են չհրավիրվել Կենտրոնական բանկի կարծիքով հիմնավորված դեպքերում:
22. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղի խորհրդի նախագահ ընտրված խորհրդի անդամը լրացուցիչ գրանցման ենթակա չէ, և կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը Կենտրոնական բանկին տեղեկացնում է նրա՝ որպես խորհրդի նախագահ ընտրվելու մասին՝ համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ կից ներկայացնելով կառավարման իրավասու մարմնի որոշումը:
23. Ղեկավարների կամ նրանց կազմում կատարված փոփոխությունները գրանցվում են Կենտրոնական բանկի որոշմամբ:
24. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով, ինչպես նաև ղեկավարի թեկնածուի կողմից պահանջվող փաստաթղթերը թերի ներկայացնելու դեպքում ղեկավարների գրանցման՝ Օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ կետով, 22-րդ հոդվածի 12-րդ կետով կամ 93-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը կարող է կասեցվել առավելագույնը երեք ամիս ժամկետով: Ընդ որում՝ գրանցման՝ Օրենքով սահմանված ժամկետի կասեցման դեպքում կասեցվում է նաև սույն կանոնակարգի 29-րդ կետով սահմանված 90-օրյա ժամկետը: Կասեցումը դադարեցնելուց հետո ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել 90-օրյա ժամկետի և ժամանակավոր պաշտոնավարման՝ մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:
25. Անձի՝ որպես ղեկավարի գրանցումը մերժվում է Կենտրոնական բանկի որոշմամբ, եթե
    1) ներկայացված փաստաթղթերը թերի են, անարժանահավատ կամ չեն համապատասխանում Օրենքի, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին,
    2) անձը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի «Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու, ղեկավարին գրանցումից հանելու կամ նշանակալից մասնակցություն, այլ մասնակցություն ձեռք բերելու, նշանակալից մասնակցությունը դադարեցնելու ուղեցույց» թիվ 114-Ն որոշման համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը,
    3) անձը չի համապատասխանում Օրենքով ղեկավարի համար սահմանված պահանջներին,
    4) անձը չի համապատասխանում սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված չափանիշներին:
26. Ղեկավարները գրանցված են համարվում մինչև տվյալ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կամ օտարերկրյա անձի մասնաճյուղի կազմում համապատասխան պաշտոնում գրանցումից հանելու մասին Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելը:
27. Կենտրոնական բանկը մշտադիտարկում է ղեկավարի համապատասխանությունը սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված չափանիշներին և մշտադիտարկման արդյունքում բացահայտված տեղեկատվության հիման վրա ղեկավարը կարող է հրավիրվել հարցազրույցի:

ԳԼՈՒԽ 5
ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՈՒՄԻՑ ՀԱՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

28. Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ ղեկավարը հանվում է գրանցումից հետևյալ դեպքերում՝
    1) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը դիմել է համապատասխան միջնորդությամբ,
    2) լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների նշանակման պահից,
    3) խախտվել են օրենքներով ղեկավարների նկատմամբ սահմանված պահանջները,
    4) ղեկավարը չի համապատասխանում սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված չափանիշներին,
    5) եթե անձը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի «Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու, ղեկավարին գրանցումից հանելու կամ նշանակալից մասնակցություն, այլ մասնակցություն ձեռք բերելու, նշանակալից մասնակցությունը դադարեցնելու ուղեցույց» թիվ 114-Ն որոշման համաձայն չի կարող զբաղեցնել այդ պաշտոնը:
29. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա անձի մասնաճյուղը ղեկավարների կազմում փոփոխություն տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
    1) ղեկավարին գրանցումից հանելու վերաբերյալ միջնորդագիր՝ գրանցումից հանելու պատճառների հիմնավորումներով՝ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կամ օտարերկրյա անձի կառավարման իրավասու մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ,
    2) կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կամ օտարերկրյա անձի մասնաճյուղի կառավարման իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ փոփոխություններ կատարելու, առկայության դեպքում՝ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6
ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

30. Ղեկավարի պաշտոնը կարող է զբաղեցվել ժամանակավոր պաշտոնակատարի կողմից կամ թափուր մնալ ոչ ավելի քան 90 օր՝ սկսած կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի կամ օտարերկրյա անձի մասնաճյուղի կողմից ղեկավարին պաշտոնից ազատելու պահից:
31. Ղեկավարի պաշտոնը թափուր մնալու դեպքում կարող է նշանակվել ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև 90 օր ժամկետով: Ընդ որում, 90- օրյա ժամկետը սահմանվում է տվյալ ղեկավարի պաշտոնում նշանակվող բոլոր ժամանակավոր պաշտոնակատարների համար (միևնույն պաշտոնի նոր ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը, ինչպես նաև տվյալ պաշտոնի թափուր մնալը չի ընդհատում կամ վերսկսում 90-օրյա ժամկետը):
32. Սույն կանոնակարգի 31-րդ կետով նախատեսված՝ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու դեպքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կամ օտարերկրյա անձի մասնաճյուղը նախապես գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին տվյալ ժամանակավոր պաշտոնակատարի մասին՝ ներկայացնելով ժամանակավոր պաշտոնակատարի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայության համարանիշը (հանրային

ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը), կրթության և վերջին 10 տարվա աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ:

33. Եթե ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվում Կենտրոնական բանկի կողմից արդեն իսկ գրանցված անձը, ապա սույն կանոնակարգի 32-րդ կետով սահմանված կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում:
34. Կենտրոնական բանկը իրավասու է չընդունել սույն կանոնակարգի 30-րդ կետի համաձայն ժամանակավոր պաշտոնակատարի նշանակումը՝ այդ մասին գրավոր ձևով տեղեկացնելով կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին կամ օտարերկրյա անձի մասնաճյուղին, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով անձը՝ որպես ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար, չի կարող պատշաճ կերպով իրականացնել իր պարտականությունները: Այդ դեպքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը կամ օտարերկրյա անձի մասնաճյուղը պարտավոր է Կենտրոնական բանկի գրավոր տեղեկացումը ստանալու պահից եռօրյա ժամկետում տվյալ անձին ազատել այդ պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:
35. Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի խորհրդի նախագահի և անդամների ժամանակավոր պաշտոնակատար չի նախատեսվում:

Հավելված 1
«Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց մասնաճյուղերի ղեկավարների գրանցման կարգը» Կանոնակարգ 7/05-ը Հավելվածի

Ղեկավարի գրանցման դիմում

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
_____ին

Հարգելի _____

Խնդրում ենք _____ գրանցել որպես
(անուն, ազգանուն, հայրանուն)

_____:
(կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը, ղեկավարի պաշտոնը)

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող տեղեկությունները:

Հավաստիացնում ենք, որ վերոնշյալ անձը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին և վերջինիս ստորագրությունը, որն ամրակցվում է ղեկավարի վերաբերյալ ներկայացվող տեղեկանքին, համապատասխանում է իսկականի հետ:

Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի (օտարերկրյա անձի) կառավարման մարմնի իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

_____ _____

« » -------- 20 թ.:»:

ՏԵՂԵԿԱՆՔ
Ղեկավարի և նրա գործունեության վերաբերյալ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
□ Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները
1. Կազմակերպության վերաբերյալ տվյալները (այս բաժնում նշվում են այն կազմակերպության տվյալները, որի ղեկավար դուք պետք է հանդիսանաք:)
1.1. Կազմակերպության անվանումը և կոդը (առկայության դեպքում)
1.2. Կազմակերպության տեսակ o բանկ o օտարերկրյա բանկի մասնաճյուղ o վարկային կազմակերպություն o ապահովագրական ընկերություն o օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ o ապահովագրական բրոքեր o ներդրումային ընկերություն o օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ o կարգավորվող շուկայի օպերատոր o Կենտրոնական դեպոզիտարիա o ֆոնդի կառավարիչ o ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձ o օտարերկրյա ֆոնդի կառավարչի մասնաճյուղ o Բյուրո o վճարահաշվարկային կազմակերպություն o Կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձ o Օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղ
2. Ղեկավար պաշտոն
2.1 Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք 1.1 ենթակետում նշված կազմակերպությունում o տնօրենների (դիտորդ) խորհրդի անդամ (խորհրդի անդամ), o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ o գլխավոր հաշվապահ o ներքին աուդիտի ղեկավար o ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձ o համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու o վերստուգիչ (վերստուգող) հանձնաժողովի նախագահ (ղեկավար) o օպերատորի կարգապահական հանձնաժողովի նախագահ o օպերատորի վերահսկող ծառայության ղեկավար o պատասխանատու ակտուար o ներքին դիտարկումների մարմնի ղեկավար

o կիբեռանվտանգության համար պատասխանատու անձ

2.2 Նկարագրեք Ձեր առանցքային իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար՝ ըստ Ձեր աշխատատեղի նկարագրի, աշխատանքային պայմանագրի:

3. Անձնական տվյալներ

3.1 Անուն, ազգանուն, հայրանուն

3.2 Սեռ՝
o արական
o իգական

3.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)

3.4 Ծննդավայր (երկիր, մարզ, համայնք)

3.5 Նշեք՝
- ○ Հաշվառման հասցե
- ○ Փաստացի բնակության հասցե

3.6. Քաղաքացիություն
o ՀՀ
o Այլ (նշել քաղաքացիության երկիրը (երկրները))

3.6.1 Ռեզիդենտություն
o ՀՀ
o Այլ (նշել քաղաքացիության երկիրը)

3.7 Նշեք՝
- ○ Անձնագրի տվյալները
- ○ Գործող այլ անձնագրի տվյալները (առկայության դեպքում)

3.8 Նշեք՝
- ○ Հանրային ծառայությունների համարանիշը (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը)
- ○ Կիրառելի չէ

3.9 Նշեք հեռախոսահամար

- ○ բջջային
- ○ այլ

3.10 Էլեկտրոնային փոստի հասցե

3.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, ազգանունները, հայրանունները, դրանք կրելու ժամանակաշրջանները,
- ○ Անուն, ազգանուն, հայրանուն
- ○ Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)

4. Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, միջազգային որակավորման անվանումը	Բարձրագույն ուսումնական հաստատության գտնվելու վայրը	Բարձրագույն ուսումնական հաստատության սովորելու ժամանակաշրջանը(_թ-ից մինչև _թ.)	Մասնագի-տությունը	Գիտական աստիճանը

4.2 Նշեք գիտելիքը հիմնավորող տեղեկությունները/փաստաթղթերը

Որակավորումներ	Վերապատրաստումներ	Դասընթացներ	Նախագծեր

4.3 Ի՞նչ լեզուների եք տիրապետում
o հայերեն
o անգլերեն
o ռուսերեն
o այլ (նշել լեզուն)

4.4 Նշել վերջին առնվազն 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները (ընդ որում, պետք է նշել փաստացի աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալները՝ անկախ դրանց՝ աշխատանքային գրքույկում ներառված լինելու կամ չլինելու հանգամանքից):

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Կազմակերպության գործունեության ոլորտը	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը	Հիմնական պարտականությունները	Ազատման հիմքերը	Նշագրում կատարեք, եթե աշխատանքային գրքույկում տվյալները ներառված չեն

4.5 Նշեք

○ Ձեզ անձամբ ճանաչող առավելագույնը 3 անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ: Ընդ որում, այդ անձանցից մեկը պետք է լինի Ձեր վերջին աշխատատեղից (վերջին աշխատատեղ համարվում է նախորդ կազմակերպությունը, որտեղ Դուք աշխատել եք), իսկ մյուս երկուսը չպետք է լինեն այն կազմակերպությունից, որտեղ նախատեսում եք անցնել աշխատանքի, բայց աշխատում են կամ աշխատել են ֆինանսական համակարգում:

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայրը և դրա գտնվելու վայրը	Պաշտոնը	Ֆինանսական համակարգում աշխատանքային տարիները	Հեռախոսահամար, էլ. փոստի հասցե	Երաշխավորի հետ փոխկապակցվածության բնույթը

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում պահանջվող անձինք չկան:

5. Ղեկավարի (պատասխանատու անձի) վերաբերյալ այլ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար:
o Ոչ,

o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով մարված կամ վերացված լինելու վերաբերյալ)

5.2.1 Արդյո՞ք Դուք ներառված եք Միավորված ազգերի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ցանկերում:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ կամ ունեք չմարված (չներված) պարտավորություններ կամ Ձեր սնանկության վերաբերյալ դիմումը Դատարանը ընդունել է վարույթ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք կամ նախկինում ներգրավված եք եղել որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5 . 7 Արդյո՞ք Դուք հարկային, մաքսային, ֆինանսական ոլորտներում վերջին 5 տարվա ընթացքում ենթարկվել եք վարչական պատասխանատվության:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր)

5.8 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում չնշված կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.9 Արդյո՞ք սույն միջնորդագրի 1.2 կետում նշված կազմակերպությունում (այսուհետ՝ կազմակերպություն) Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում (Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում) տվյալ կազմակերպությունը ճանաչվել է անվճարունակ կամ սնանկ, կամ ՀՀ տարածքում գործող կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.10 Արդյո՞ք որպես կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ Կենտրոնական բանկի կամ տվյալ կազմակերպության կողմից կիրառվել է որևէ պատասխանատվության միջոց վերջին 5 տարվա ընթացքում:
o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ

5.11 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից (որակավորումից) կամ կարգապահական այլ պատժամիջոցներ են կիրառվել Ձեր նկատմամբ կազմակերպության, նաև՝ 1 . 2-րդ ենթակետում չնշված, գործունեությունը կարգավորող համապատասխան օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման հիմքերը)

5 . 12 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը ունեցել է գրանցման, լիցենզավորման, թույլտվության մերժման դեպքեր կամ կազմակերպության նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (ամսաթիվ (օր/ամիս/տարի), իրավական հիմքեր, մերժած կամ պատասխանատվության միջոց կիրառած մարմնի անվանումը)

5 .13 Արդյո՞ք Դուք նախորդ աշխատանքից ազատվել եք գործատուի նախաձեռնությամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով:

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ

5.14 Արդյո՞ք պահպանված են համապատասխան օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջները:

o Ոչ, ներկայացնել մանրամասներ

o Այո

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք՝

○ այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք նշանակալից մասնակցություն.

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

(Ընդ որում՝ 6.1-6.3 կետերում հաշվետու թողարկողներին վերաբերող դրույթները լրացվում են միայն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, ֆոնդի պահառուների ղեկավարների, ինչպես նաև ֆոնդի կառավարչի անունից կամ կազմում ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց և ֆոնդի պահառուի աշխատակցի կողմից)

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%),	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված մասնակցությունը չունեք կամ չեք ունեցել:

6.2 Նշեք՝

○ այն կազմակերպությունների, ինչպես նաև հաշվետու թողարկող այն ընկերությունների վերաբերյալ աղյուսակում պահանջվող տվյալները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել են նշանակալից մասնակցություն,

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1 կետում նշված կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:)

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության (հաշվետու թողարկողի) անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա,
- Իրազեկ չեմ, եթե սույն կետում նշված տվյալներին չեք տիրապետում:

6.3 Նշեք՝

○ ֆինանսական համակարգում, ինչպես նաև հաշվետու թողարկող ընկերություններում աշխատող կամ աշխատած հետևյալ անձանց վերաբերյալ տվյալները՝ ծնողներ, տատ, պապ, 18 տարին լրացած թոռ, 18 տարին լրացած զավակ ու նրա ամուսին, 18 տարին լրացած քույր, եղբայր ու նրանց ամուսիններ և 18 տարին լրացած նրանց զավակներ, ամուսնու ծնողներ, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակ.

Անուն,ազգանուն	Ժամանակահատվածը (նախկինում ֆինանսական համակարգում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատած անձանց համար նշել համապատասխան կազմակերպությունում (հաշվետու թողարկող ընկերություններում) աշխատելու ժամանակահատվածը	Ղեկավարի հետ փոխկապակց-վածության ձև	Աշխատան-քի վայր	Պաշտոն

○ Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն դրամային (կամ այլ) պարտավորություններ այն կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

7.3 Արդյո՞ք Դուք ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

o Ոչ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

7.4. Արդյո՞ք Ձեզ հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են ՀՀ տարածքում գործող կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-ին կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

o Ոչ ,
o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)
o Իրազեկ չեմ

8. Այլ տեղեկություններ

8.1 Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

(Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.1-րդ կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի, հաշվետու թողարկողների դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Սույն կետում լրացվում են միայն համատեղ տնտեսություն վարող կամ համատեղ ապրող ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները:)

Անուն, ազգանուն	Անձնագրի տվյալները	Փոխկապակց-վածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայրը, հեռախոսա-համար

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

8.2 Նշեք՝

- Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները:

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակց-վածության ձև	ՀՎՀՀ	Հեռախոսահամար (բջջային և այլ)

- Կիրառելի չէ, եթե սույն կետում նշված փոխկապակցված անձ չկա:

9. Շահերի բախման վերաբերյալ

9.1 Արդյո՞ք Դուք 1.1-ին կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկության ղեկավարների հետ ունեք փոխկապակցվածություն:

o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասները

9.2 Արդյո՞ք Դուք 1.1-րդ կետում նշված կազմակերպության, դրա մայր կամ դուստր ձեռնարկություն հետ ունեք կամ վերջին 5 տարվա ընթացքում ունեցել եք մասնագիտական կամ առևտրային հարաբերություններ:

o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասները

9.3 Նշեք այլ տեղեկություններ Ձեր կարծիքով հնարավոր շահերի բախման (առկայության դեպքում) և դրանց կառավարման մեթոդների վերաբերյալ:

10. Ձեր կարծիքով արդյո՞ք առկա են այլ կարևոր տեղեկություններ, որոնք կցանկանայիք նշել
o Ոչ
o Այո, ներկայացնել մանրամասները

11. Այլ փաստաթղթեր

12. Այս կետը լրացվում է միայն բանկի և ապահովագրական ընկերության խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ Կանոնակարգ 1-ի Հավելված 41-ով կամ Կանոնակարգ 3/01-ի Հավելված 43-ով սահմանված «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ:
o Այո
o Ոչ

13. Հավաստիացնում եմ, որ
ա. սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական,
բ. անձը բավարարում է օրենքով և կանոնակարգերով սահմանված ղեկավարի մասնագիտական համապատասխանության չափանիշներին և այլ պահանջներին:

Համաձայն եմ, որ սույն տեղեկանքով ներկայացված տեղեկատվության իսկությունը ստուգելու համար Կենտրոնական բանկը դիմի համապատասխան իրավասու մարմիններին՝ պահպանելով տեղեկատվության գաղտնիությունը:

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) _____

Գրանցման ներկայացված ղեկավարի ստորագրություն

Ամրակցեք ստորագրության նմուշը

30 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 230-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 114-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին *

Նպատակ ունենալով հստակեցնել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց ղեկավարների և նշանակալից մասնակիցների նկատմամբ կիրառվող՝ գրանցման կամ նախնական համաձայնություն տրամադրելու չափանիշները,

հիմք ընդունելով «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 34-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի «Ֆինանսական կազմակերպությունում ղեկավար լինելու, ղեկավարին գրանցումից հանելու կամ նշանակալից մասնակցություն, այլ մասնակցություն ձեռք բերելու, նշանակալից մասնակցությունը դադարեցնելու ուղեցույցը» թիվ 114-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանում «179-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը,» բառերից հետո լրացնել «Կրիպտոակտիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 34-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը,» բառերը:
2. Որոշման նախաբանում «58-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը,» բառերը փոխարինել «58-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը,» բառերով:
3. Որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 2-րդ կետում «օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը, օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղը,» բառերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2025 թ. դեկտեմբերի 30-ին (ՀՀԳՏ, 21.01.2026):

13 հունվարի 2026 թվականի թիվ 3-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին *

Նպատակ ունենալով հստակեցնել տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը և հաշվարկում մասնակցող տարրերի կազմը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1.3-րդ և 2-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 14-ի ««Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մայիսի 24-ի թիվ 240-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 74-Ն որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 269-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ը (այսուհետ՝ Կանոնակարգ) շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2026 թ. հունվարի 13-ին (ՀՀԳՏ, 23.01.2026):

Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2026 թվականի հունվարի 13-ի
թիվ 3-Ն որոշման

«Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 17/02

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Գ Լ ՈՒ Խ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. «Վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը» կանոնակարգ 17/02-ը (այսուհետ՝ Կանոնակարգ) համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վճարահաշվարկային կազմակերպությունների (այսուհետ՝ վճարահաշվարկային կազմակերպություն) գործունեությունը, վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանվող տնտեսական նորմատիվները, դրանց հաշվարկման կարգը և հաշվարկին մասնակցող տարրերի կազմն ու սահմանաչափերը:

Գ Լ ՈՒ Խ 2

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ

2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) վճարահաշվարկային կազմակերպությունների համար սահմանում է հետևյալ տնտեսական նորմատիվները.

1) ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվ,

2) իրացվելիության տնտեսական նորմատիվ՝ վճարահաշվարկային կազմակերպությունների բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը:

3. Վճարահաշվարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի նվազագույն չափի տնտեսական նորմատիվը (Ն1 նորմատիվ) սահմանվում է 100 մլն (հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

4. Վճարահաշվարկային կազմակերպությունների բարձր իրացվելի ակտիվների և ընթացիկ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը (իրացվելիության՝ Ն2 նորմատիվ) սահմանվում է 60 տոկոս, սակայն բարձր իրացվելի ակտիվների մեծությունը չպետք է պակաս լինի սույն կանոնակարգի 19-րդ կետի համաձայն որոշվող ֆինանսական պարտավորությունների մեծությունից:

5. Հայաստանի Հանրապետության տարածքում նոր ստեղծվող վճարահաշվարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը կարող է համալրվել Հայաստանի Հանրապետության

տարածքում գործող բանկերից մեկում բացված բանկային հաշվի (հաշիվների) վրա առկա դրամական միջոցներով:

Գ Լ ՈՒ Խ 3

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

6. Վճարահաշվարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի նվազագույն չափը՝ Ն1 և իրացվելիության՝ Ն2 տնտեսական նորմատիվները հաշվարկվում են ամսական կտրվածքով:

7. Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա միջին օրական հաշվարկով (ամսվա ընթացքում ընդհանուր կապիտալի օրական մեծությունների հանրագումարը հարաբերած ամսվա օրերի թվին) ապահովել սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված ընդհանուր կապիտալի նվազագույն չափը և սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված բարձր իրացվելի ակտիվների ու ընթացիկ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը:

8. Վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալը նրա առաջին և երկրորդ մակարդակի կապիտալների հանրագումարն է: Ընդ որում՝ երկրորդ մակարդակի կապիտալը պետք է փոքր կամ հավասար լինի առաջին մակարդակի կապիտալի մեկ երրորդին:

9. Վճարահաշվարկային կազմակերպության առաջին մակարդակի կապիտալը վճարահաշվարկային կազմակերպության՝ առաջին մակարդակի հիմնական կապիտալի և առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի հանրագումարն է՝ համապատասխան նվազեցումները և ճշգրտումները կատարելուց հետո: Ընդ որում՝ առաջին մակարդակի կապիտալի նվազագույնը 75%-ը պետք է արտահայտված լինի առաջին մակարդակի հիմնական կապիտալի տեսքով:

10. Վճարահաշվարկային կազմակերպության առաջին մակարդակի հիմնական կապիտալի կազմում ընդգրկվում են հետևյալ տարրերը.

1) ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսերը, բաժնեմասերը կամ փայերը (այսուհետ՝ սովորական բաժնետոմս) հետևյալ արժեքով՝ անվանական արժեքի և սովորական բաժնետոմսերից էմիսիոն եկամտի գումարից նվազեցրած զեղչը,

2) չբաշխված շահույթը կամ վնասը, ընդ որում՝ չբաշխված շահույթը հաշվարկում ներառվում է սույն կանոնակարգի Հավելված 1-ի համաձայն,

3) այլ համապարփակ եկամտի տարրերը և հաշվեկշռային կապիտալում հաշվառվող պահուստները:

11. Վճարահաշվարկային կազմակերպության առաջին մակարդակի հիմնական կապիտալը նվազեցվում է.

1) վճարահաշվարկային կազմակերպության կողմից թողարկված այն սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի չափով, որոնք՝

ա. հետ են գնվել վճարահաշվարկային կազմակերպության կողմից, եթե արդեն իսկ չեն նվազեցվում առաջին մակարդակի կապիտալից՝ կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, կամ

բ. ձեռք են բերվել այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում վճարահաշվարկային կազմակերպությունը նշանակալից մասնակից է, կամ ձեռք են բերվել վճարահաշվարկային կազմակերպության անուղղակի ֆինանսավորմամբ, կամ

գ. վճարահաշվարկային կազմակերպությունը, որևէ իրավական փաստաթղթի հիման վրա, պարտավոր է կամ կարող է պարտավորվել ձեռք բերել հետագայում (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հետգնման դեպքերի), կամ

դ. վճարահաշվարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, կամ որոնց սեփականատերերը տնտեսապես կամ իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում են հայտնվում այն բանի արդյունքում, որ նրանց՝ սովորական բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքից բխող պահանջը որևէ կերպ ենթակա է բավարարման ավելի շուտ, քան օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը:

2) վճարահաշվարկային կազմակերպության կողմից տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքի չափով,

3) ոչ նյութական ակտիվների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ ոչ նյութական ակտիվներ) (բացառությամբ՝ սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված ակտիվների), դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների, ինչպես նաև դրանց ձեռքբերման համար կատարված կանխավճարների հաշվեկշռային արժեքի (այդ թվում՝ այլ համապարփակ եկամտում գրանցված վերագնահատման արդյունքը) չափով,

4) ծրագրային ապահովումների և դրանց օգտագործման իրավունքների, տեղեկատվական և կիբեռանվտանգության ապահովման համար ներդրվող լուծումների (օրինակ՝ կրիպտոգրաֆիայի, թոքենիզացիայի), առանց շփման տեխնոլոգիաների ծրագրերի (օրինակ՝ ՔՅՈՒԱՐ, ԷՆԷՖՍԻ), հեռահար նույնականացման տեխնոլոգիաների ծրագրերի, զեղծարար գործողությունների բացահայտման ծրագրերի, ամպային ծառայությունների, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում կիրառվող ստանդարտների և դրանց համապատասխանության սերտիֆիկացման (այսուհետ՝ Ծրագրային ակտիվների) գծով ոչ նյութական ակտիվների, դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների, ինչպես նաև դրանց ձեռքբերման համար կատարված կանխավճարների հաշվեկշռային արժեքների (այդ թվում՝ այլ համապարփակ եկամտում գրանցված վերագնահատման արդյունքը)՝ վճարահաշվարկային կազմակերպության առաջին մակարդակի հիմնական կապիտալի տարրերի հանրագումարի 50 տոկոսը գերազանցող գումարի չափով: Ընդ որում՝ սույն ենթակետով սահմանված հաշվարկի ժամանակ առաջին մակարդակի հիմնական կապիտալի տարրերի հանրագումարը նվազեցվում է հիմնական միջոցների, այլ նյութական ակտիվների, Ծրագրային ակտիվների արժեքի վերագնահատման արդյունքում ձևավորված այլ համապարփակ եկամտի չափով,

5) հիմնական միջոցների, այլ նյութական ակտիվների և օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ նյութական ակտիվներ), դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքների (այդ թվում՝ այլ համապարփակ եկամտում գրանցված վերագնահատման արդյունքը)՝ վճարահաշվարկային կազմակերպության առաջին մակարդակի հիմնական կապիտալի տարրերի հանրագումարի 50 տոկոսը գերազանցող գումարի չափով: Ընդ որում՝ սույն ենթակետով սահմանված հաշվարկի ժամանակ առաջին մակարդակի հիմնական կապիտալի տարրերի հանրագումարը նվազեցվում է հիմնական միջոցների, այլ նյութական ակտիվների, Ծրագրային ակտիվների արժեքի վերագնահատման արդյունքում ձևավորված այլ համապարփակ եկամտի չափով,

6) հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքի և հետաձգված հարկային պարտավորությունների հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով,

7) այլ վճարահաշվարկային կազմակերպությունների, բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ինչպես նաև «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ֆինանսական գործառնություններ իրականացնող անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով, եթե՝

ա. կանոնադրական կապիտալում ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 4.99 տոկոսը կամ ավելին, կամ

բ. բոլոր անձանց (այդ թվում՝ սույն կետի 8-րդ ենթակետում նշված) կանոնադրական կապիտալներում ներդրումները գերազանցում են վճարահաշվարկային կազմակերպության առաջին

մակարդակի հիմնական և լրացուցիչ կապիտալների հանրագումարի (նվազեցրած սույն կետի 1-5-րդ ենթակետերում և սույն կանոնակարգի 13-րդ կետում նշված տարրերը) 10 տոկոսը:

8) սույն կետի 7-րդ ենթակետում չնշված այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները նվազեցվում են հետևյալ չափով.

$$Ն = Max [(Նա - Չ), (Նբ - Կ), 0],$$

Որտեղ՝

Ն-ը վճարահաշվարկային կազմակերպության առաջին մակարդակի հիմնական կապիտալից կատարվող նվազեցման չափն է,

Նա-ն տվյալ անձի կանոնադրական կապիտալում կատարված ներդրման չափն է,

Չ-ն տվյալ անձի կանոնադրական կապիտալի 4.99 տոկոսն է,

Նբ-ն բոլոր անձանց (այդ թվում՝ սույն կետի 7-րդ ենթակետում նշված) կանոնադրական կապիտալում կատարված ներդրումների հանրագումարն է,

Կ-ն վճարահաշվարկային կազմակերպության առաջին մակարդակի հիմնական և լրացուցիչ կապիտալների հանրագումարի (նվազեցրած սույն կետի 1-5-րդ ենթակետերում և սույն կանոնակարգի 13-րդ կետում նշված տարրերը) 10 տոկոսն է:

9) այլ կազմակերպություններում կատարված փոխադարձ ներդրումների դեպքում վճարահաշվարկային կազմակերպության կապիտալում կատարված ներդրման հաշվեկշռային արժեքի չափով, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով այդ ներդրումը կատարվել է վճարահաշվարկային կազմակերպության կապիտալն արհեստականորեն մեծացնելու նպատակով: Սույն ենթակետի իմաստով՝ փոխադարձ է համարվում այն ներդրումը, որի արդյունքում վճարահաշվարկային կազմակերպությունը կամ այն կազմակերպությունը, որի կապիտալում վճարահաշվարկային կազմակերպությունն ունի նշանակալից մասնակցություն (այսուհետ՝ սույն պարբերությունում՝ վճարահաշվարկային կազմակերպություն), մասնակցություն է ձեռք բերում մեկ այլ անձի կամ այն կազմակերպության կապիտալում, որում այդ անձն ունի նշանակալից մասնակցություն, և նա (նրա նշանակալից մասնակիցը) իր հերթին մասնակցություն ունի (ունեն) վճարահաշվարկային կազմակերպության կապիտալում:

12. Առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալի կազմում ընդգրկվում են սույն կանոնակարգի Հավելված 1-ի բոլոր պահանջներին բավարարող արտոնյալ բաժնետոմսերը հետևյալ արժեքով՝ բաժնետոմսի անվանական արժեքի և արտոնյալ բաժնետոմսերից էմիսիոն եկամտի գումարից նվազեցրած զեղչ:

13. Առաջին մակարդակի լրացուցիչ կապիտալը նվազեցվում է սույն կանոնակարգի Հավելված 1-ի բոլոր պահանջներին բավարարող այն արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի չափով, որոնք հետ են գնվել վճարահաշվարկային կազմակերպության կողմից (եթե արդեն իսկ չեն նվազեցվել կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն) կամ ձեռք են բերվել այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում վճարահաշվարկային կազմակերպությունը նշանակալից մասնակից է, կամ որոնք վճարահաշվարկային կազմակերպությունը որևէ իրավական փաստաթղթի հիման վրա պարտավոր է կամ կարող է պարտավորվել ձեռք բերել (բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հետգնման դեպքերի) հետագայում:

14. Սույն կանոնակարգի համաձայն՝ վճարահաշվարկային կազմակերպության էմիսիոն եկամուտը ներառվում է առաջին մակարդակի կապիտալի կազմում, եթե վճարահաշվարկային կազմակերպության կանոնադրությամբ սահմանվել է, որ վճարահաշվարկային կազմակերպության էմիսիոն եկամուտը կարող է օգտագործվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով

կանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ վճարահաշվարկային կազմակերպության անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ կարող է ուղղվել վճարահաշվարկային կազմակերպության բաժնետոմսերի (բաժնեմասերի) անվանական արժեքի ավելացմանը:

15. Երկրորդ մակարդակի կապիտալի կազմում ընդգրկվում են սույն կանոնակարգի Հավելված 2-ի բոլոր պահանջներին բավարարող երկարաժամկետ ստորադաս փոխառությունները (այդ թվում՝ վարկերով և պարտատոմսերով ներգրավված միջոցները)՝ պայմանագրային մայր գումարի (անվանական արժեքի) չափով: Ընդ որում՝ ստորադաս փոխառության մայր գումարը (անվանական արժեքը) ենթակա է օրական ամորտիզացիայի՝ սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված կարգով:

16. Վճարահաշվարկային կազմակերպության իրացվելիության Ն2 տնտեսական նորմատիվը պետք է բավարարի հետևյալ պահանջին.

$$Ն2 = Max \quad (Աբի \geq 0.6 * Պընթ \ ; Աբի \geq ՖՊ)$$

որտեղ՝

Աբի - միջին օրական հաշվարկով բարձր իրացվելի ակտիվներն են ամսվա ընթացքում, որը որոշվում է.

$$Աբի = \frac{(Աբի\ 1 + Աբի\ 2 + \ldots + Աբի\ Ն)}{Ն} \quad \text{բանաձևով,}$$

որտեղ՝

Աբի 1, Աբի 2, ..., Աբի Ն - վճարահաշվարկային կազմակերպության բարձր իրացվելի ակտիվներն են ըստ օրերի, իսկ «Ն»-ն՝ հաշվետու ամսվա օրերի թիվն է,

Պընթ-միջին օրական հաշվարկով ընթացիկ պարտավորություններն են ամսվա ընթացքում, որը որոշվում է.

$$Պընթ = \frac{(Պընթ\ 1 + Պընթ\ 2 + \ldots + Պընթ\ Ն)}{Ն} \quad \text{բանաձևով,}$$

որտեղ՝

Պընթ 1, Պընթ 2, ..., Պընթ Ն – վճարահաշվարկային կազմակերպության ընթացիկ պարտավորություններն են՝ ըստ օրերի, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է,

ՖՊ-միջին օրական հաշվարկով վճարահաշվարկային կազմակերպության՝ վճարահաշվարկային ծառայություններից օգտվող անձանց հանդեպ՝ սույն կանոնակարգի 19-րդ կետի համաձայն որոշվող ֆինանսական պարտավորությունների մեծությունն է ամսվա ընթացքում, որը որոշվում է.

$$ՖՊ = \frac{(ՖՊ\ 1 + ՖՊ\ 2 + \ldots + ՖՊ\ Ն)}{Ն} \quad \text{բանաձևով,}$$

որտեղ՝

ՖՊ1, ՖՊ2, ..., ՖՊՆ – վճարահաշվարկային կազմակերպության՝ վճարահաշվարկային ծառայություններից օգտվող անձանց հանդեպ՝ սույն կանոնակարգի 19-րդ կետի համաձայն որոշվող ֆինանսական պարտավորությունների մեծությունն է՝ ըստ օրերի, իսկ «Ն»-ն հաշվետու ամսվա օրերի թիվն է:

17. Ընթացիկ պարտավորությունների հաշվարկում ընդգրկվում են հաշվեկշռի «Պարտավորություններ» կարգում հաշվառվող ընթացիկ այն միջոցները (ներառյալ՝ դրանց գծով հաշվեգրված տոկոսները), որոնց վերագրման մոտեցումները նկարագրված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով, այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունները: Ընդ որում՝ սույն Կանոնակարգի իմաստով՝ ժամկետանց են այն պարտավորությունները, որոնք, բացառությամբ դատարանի կամ արբիտրաժային դատարանի վարույթում գտնվողների, չեն կատարվել պարտավորությամբ սահմանված ժամկետում: Դատարանի կամ արբիտրաժային դատարանի վարույթում գտնվող գործերով պարտավորությունները նույնպես համարվում են ընթացիկ:

18. Բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում ընդգրկվում են ստորև թվարկված այն ակտիվները (ներառյալ այդ ակտիվների գծով հաշվեգրված տոկոսների), որոնց համար չկա դրանց տնօրինումը սահմանափակող որևէ պայման, մասնավորապես՝ նման ակտիվները գրավադրված չեն կամ չեն հանդիսանում երաշխիքային միջոց.

1) ռեզիդենտ բանկերում բացված բանկային հաշվին կամ դրամարկղում առկա դրամական միջոցները, ներառյալ՝ ճանապարհին գտնվող և վճարահաշվարկային կազմակերպության կողմից շահագործվող վճարային տերմինալներում գտնվող դրամական միջոցները, կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը: Ընդ որում՝ բանկային հաշվին կամ դրամարկղում առկա դրամական միջոցները ու կանխիկին հավասարեցված վճարային փաստաթղթերը բարձր իրացվելի ակտիվների հաշվարկում պետք է կազմեն բարձր իրացվելի ակտիվների ընդհանուր գումարի առնվազն 30 տոկոսը,

2) ցպահանջ ավանդները,

3) ժամկետային ավանդները, որոնց համար սահմանված է ավանդատուի կողմից ժամկետից շուտ ցանկացած պահի բանկային ավանդի պայմանագրի լուծման հնարավորություն՝ պայմանով, որ պայմանագիրը վաղաժամկետ լուծելու արդյունքում ավանդատուից տույժ և տուգանք չի գանձվելու,

4) բանկային ոսկին, ներառյալ՝ ճանապարհին գտնվող բանկային ոսկին,

5) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված փոխանցելի մուրհակները, որոնց՝ մինչև մարումն ընկած ժամանակահատվածը մինչև 1 տարի է և որոնք ենթակա են պարտադիր վճարման Կենտրոնական բանկի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության գանձապետական միասնական հաշվի միջոցներից, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերը և Կենտրոնական բանկի թողարկած արժեթղթերը՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,

6) վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերը՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,

7) ոչ ռեզիդենտ բանկերում բանկային հաշիվներին առկա միջոցները՝ պայմանով, որ ոչ ռեզիդենտ բանկը ունենա ստորև նշված միջազգային վարկանիշային կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

ա. Ստանդարտ և Փուրզ՝ «A-» կամ

բ. Մուդիզ՝ «A3» կամ

գ. Ա. Մ. Բեստ՝ «A-» կամ

դ. Ֆիտչ՝ «A-»-ից»:

Գ Լ ՈՒ Խ 4

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԱՆՁԱՆՑԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

19. Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից Օրենքով վերջիններիս թույլատրված վճարահաշվարկային ծառայությունների մատուցման շրջանակներում վճարահաշվարկային ծառայություններից օգտվող անձանցից ստացված, այդ թվում՝ թողարկված էլեկտրոնային փողի դիմաց, սակայն շահառուներին (գումարի փոխանցման (վճարման) վերջնական հասցեատիրոջը) կամ վճարման շղթայում ներգրավված այլ մասնագիտացված միջնորդներին (բանկ կամ վճարահաշվարկային կազմակերպություն) դեռևս չվճարված դրամական միջոցները (այսուհետ՝ ֆինանսական պարտավորություններ) ցանկացած պահի պետք է առանձնացված լինեն վճարահաշվարկային կազմակերպության սեփական միջոցներից և ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտից պետք է.

1) պահվեն հատուկ բանկային հաշվին՝ պայմանով, որ դրանք պաշտպանված են և կարող են օգտագործվել սույն կանոնակարգի 20-րդ կետին համապատասխան կամ

2) առկա լինի ապահովագրական ընկերության հետ կնքված ապահովագրության պայմանագիր այն գումարի չափով, որն ապահովագրության պայմանագրի բացակայության պարագայում պետք է առանձնացված լիներ սույն կետի 1-ին ենթակետի համաձայն, եթե առկա չէ 3-րդ ենթակետին համապատասխան երաշխիք: Ընդ որում՝ ապահովագրական ընկերության հետ կնքված պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ապահովագրված միջոցները ենթակա են վճարման (հատուցման) վճարահաշվարկային կազմակերպության կողմից իր ֆինանսական պարտավորությունները կատարելու անկարողության (վճարահաշվարկային կազմակերպության անվճարունակության (սնանկության) կամ դատարանի որոշմամբ վճարելու պարտավորության) ի հայտ գալու դեպքում՝ վճարահաշվարկային կազմակերպության կողմից իր ֆինանսական պարտավորությունները կատարելու անկարողության պահին այդ պարտավորությունների գծով պահանջներ ունեցող անձանց՝ հատուցման դիմումը և հատուցման համար ապահովագրական ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում կամ

3) առկա լինի երաշխիք՝ տրամադրված բանկի կամ վարկային կազմակերպության կողմից այն գումարի չափով, որը երաշխիքի պայմանագրի բացակայության պարագայում պետք է առանձնացված լիներ սույն կետի 1-ին ենթակետի համաձայն, եթե առկա չէ 2-րդ ենթակետին համապատասխան կնքված ապահովագրության պայմանագիր: Ընդ որում՝ երաշխիքի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ երաշխիքի գումարը ենթակա է վճարման վճարահաշվարկային կազմակերպության կողմից իր ֆինանսական պարտավորությունները կատարելու անկարողության (վճարահաշվարկային կազմակերպության անվճարունակության (սնանկության) կամ դատարանի որոշմամբ վճարելու պարտավորության) ի հայտ գալու դեպքում՝ վճարահաշվարկային կազմակերպության կողմից իր ֆինանսական պարտավորությունները կատարելու անկարողության պահին այդ պարտավորությունների գծով պահանջներ ունեցող անձանց (բենեֆիցիարներին)՝ վճարման գրավոր պահանջը և վճարման համար բանկի կամ վարկային կազմակերպության կողմից պահանջվող փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում:

20. Սույն կանոնակարգի 19-րդ կետում նշված հատուկ բանկային հաշիվը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ բանկային հաշիվ, և այդ հաշվին առկա դրամական միջոցները.

1) չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել վճարահաշվարկային կազմակերպության այլ պարտավորությունների դիմաց կամ վճարահաշվարկային կազմակերպության սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար

լուծարային միջոց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի,

2) կարող են օգտագործվել՝

ա. սույն կանոնակարգի 19-րդ կետում նշված շահառուներին վճարման նպատակով,

բ. այլ ուղղությամբ՝ պայմանով, որ ապահովված են սույն կանոնակարգի 19-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետերի պահանջները,

3) վճարահաշվարկային կազմակերպության կողմից իր ֆինանսական պարտավորությունները կատարելու անկարողության (վճարահաշվարկային կազմակերպության անվճարունակության (սնանկության) կամ դատարանի որոշմամբ վճարելու պարտավորության) ի հայտ գալու դեպքում ենթակա են վճարման վճարահաշվարկային կազմակերպության կողմից իր ֆինանսական պարտավորությունները կատարելու անկարողության պահին այդ պարտավորությունների գծով պահանջներ ունեցող անձանց՝ հատուցման դիմումը ստանալու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում:

21. Սույն կանոնակարգի 19-րդ կետում նշված՝ վճարահաշվարկային կազմակերպության հետ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը տվյալ վճարահաշվարկային կազմակերպության հետ չեն կարող հանդիսանալ միևնույն ֆինանսական խմբի անդամ:

22. Այն դեպքում, երբ սույն կանոնակարգի 19-րդ կետում նշված ապահովագրական ընկերությունը, բանկը կամ վարկային կազմակերպությունը ոչ ռեզիդենտ է, այն պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանիշային կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

1) Ստանդարտ և Փուրզ՝ «A-» կամ

2) Մուդիզ՝ «A3» կամ

3) Ա. Մ. Բեստ՝ «A-» կամ

4) Ֆիտչ՝ «A-»-ից»:

23. Եթե ոչ ռեզիդենտ բանկը, վարկային կազմակերպությունը կամ ապահովագրական ընկերությունը (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություն) ունի միայն մեկ վարկանիշային կազմակերպության կողմից տրված վարկանիշ, ապա հիմք է ընդունվում միայն տվյալ վարկանիշը: Եթե միևնույն ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունն ունի երկու տարբեր վարկանիշ՝ տրամադրված տարբեր վարկանիշային կազմակերպությունների կողմից, ապա վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է հիմք ընդունի ամենացածր վարկանիշը: Իսկ միևնույն ոչ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության համար երեք և ավելի վարկանիշների առկայության դեպքում վճարահաշվարկային կազմակերպությունը պետք է հիմք ընդունի երկու ամենաբարձր վարկանիշներից առավել ցածր վարկանիշը:

24. Վճարահաշվարկային կազմակերպությունը պարտավոր է զսպել սույն կանոնակարգի 19-րդ կետում նշված ֆինանսական պարտավորությունների պաշտպանության նպատակով կիրառվող եղանակների կենտրոնացման ռիսկը՝ ապահովելով, որ պաշտպանության միևնույն եղանակը չկիրառվի ֆինանսական պարտավորությունների ավելի քան 70%-ի համար: Մասնավորապես՝ ֆինանսական պարտավորությունների 70%-ից ավելին չպետք է պահվի միևնույն բանկում բացված հատուկ բանկային հաշվին կամ ապահովագրված լինի միևնույն ապահովագրական ընկերության կողմից կամ երաշխավորված լինի միևնույն բանկի կամ վարկային կազմակերպության կողմից տրամադրված երաշխիքով:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Վճարահաշվարկային կազմակերպության չբաշխված շահույթը ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնասի և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթ/վնասի դրական հանրագումարն է: Չբաշխված շահույթը հիմնական կապիտալի կազմում ներառվում է հետևյալ բանաձևով հաշվարկված չափով՝

Շ = Շահույթ – ՎՀՇ,

որտեղ՝

Շ-ն – հիմնական կապիտալի կազմում ներառվող չբաշխված շահույթի մեծությունն է,

Շահույթը – նորմատիվային կապիտալի հաշվարկման պահի դրությամբ չբաշխված շահույթն է,

ՎՀՇ-ն – տվյալ տարվա ընթացքում վճարման ենթակա հավանական շահաբաժինների չափն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

ՎՀՇ = Max ((Շահույթ + ՇԲ) * Բաշխման դրույք – ՇԲ ; 0),

որտեղ՝

ՇԲ –ն – տվյալ տարվա ընթացքում արդեն վճարված շահութաբաժինների չափն է (առկայության դեպքում),

Բաշխման դրույքը – հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

Բաշխման դրույք = Max (Դ-1 ; (Դ-1 + Դ-2 + Դ-3)/3),

որտեղ՝

Դ-i (i=1,2,3) – տվյալ տարվան անմիջապես նախորդող i-րդ տարվա Բաշխման դրույքն է, որը ցույց է տալիս, թե i-րդ տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում վճարահաշվարկային կազմակերպության շահույթի (նախորդող տարվա վերջին օրվա դրությամբ վճարահաշվարկային կազմակերպության չբաշխված շահույթի և տվյալ տարվա զուտ շահույթի գումարի) որ մասն է փաստացի վճարվել շահութաբաժինների տեսքով:

Այն դեպքում, երբ վճարահաշվարկային կազմակերպության կողմից շահութաբաժնի բաշխումից հետո գումարը մինչև տվյալ բաշխման օրացուցային տարվա ավարտը ուղղվել է վճարահաշվարկային կազմակերպության հիմնական կապիտալի տարրի կամ տարրերի (բացառությամբ՝ չբաշխված շահույթի կամ վնասի) համալրմանը, տվյալ գումարը նվազեցվում է սույն կետով նախատեսված բաշխման դրույքի հաշվարկում փաստացի վճարված շահութաբաժնի գումարից:

2. Արտոնյալ բաժնետոմսն ընդգրկվում է վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի հաշվարկում, եթե բավարարում է հետևյալ պայմաններին միաժամանակ.

1) այն ամբողջությամբ վճարված է և օրենքով սահմանված կարգով հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում է կանոնադրական հիմնադրամի «Արտոնյալ բաժնետոմսեր» հաշվում,

2) վճարահաշվարկային կազմակերպության լուծարման դեպքում արտոնյալ բաժնետիրոջ պահանջները (այդ թվում՝ շահութաբաժինների գծով) ենթակա են բավարարման վճարահաշվարկային

կազմակերպության մյուս բոլոր պահանջատերերի պահանջները բավարարվելուց հետո՝ բացառությամբ սովորական բաժնետերերի պահանջների,

3) ապահովված չէ վճարահաշվարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, կամ արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն ավելի բարենպաստ կարգավիճակում չի հայտնվում այն բանի արդյունքում, որ նրա պահանջը, կանոնադրության համաձայն կամ որևէ այլ կերպ, ենթակա է բավարարման ավելի շուտ, քան վճարահաշվարկային կազմակերպության լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում՝ արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ՝ վճարահաշվարկային կազմակերպության հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ,

4) թողարկված է անժամկետ,

5) արտոնյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի վճարահաշվարկային կազմակերպության տնտեսական նորմատիվների խախտմանը կամ վճարահաշվարկային կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը, ընդ որում՝

ա. շահութաբաժնի լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում,

բ. վճարահաշվարկային կազմակերպության և արտոնյալ բաժնետիրոջ միջև որևէ իրավական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում վճարահաշվարկային կազմակերպության համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում արտոնյալ բաժնետիրոջը, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը: Ընդ որում՝ սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել արտոնյալ բաժնետոմսին հասանելիք շահութաբաժինը,

6) տվյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինները ենթակա են վճարման միայն վճարահաշվարկային կազմակերպության զուտ շահույթից կամ դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից, ընդ որում, շահութաբաժինները վճարվում են միայն դրամական միջոցով,

7) տվյալ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժնի չափը չի կարող կախվածության մեջ դրվել վճարահաշվարկային կազմակերպության վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ արտոնյալ բաժնետոմսերի գծով նախկինում վճարված շահութաբաժինների փաստացի մեծությունից,

8) վճարահաշվարկային կազմակերպությունն անուղղակիորեն չի ֆինանսավորել այդ բաժնետոմսերի ձեռքբերումը,

9) առկա չէ համաձայնություն, որով արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք կունենա որևէ սահմանափակում կամ խոչընդոտ նախատեսել վճարահաշվարկային կազմակերպության կողմից լրացուցիչ սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերի հետագա թողարկման կամ նոր ստորադաս փոխառությունների ներգրավման համար:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՀԱՇՎԱՐԿԸ

1. Երկարաժամկետ ստորադաս փոխառությունը (այսուհետ նաև՝ փոխառություն) ընդգրկվում է վճարահաշվարկային կազմակերպության երկրորդ մակարդակի կապիտալի հաշվարկում, եթե փոխառությունը (փոխառության պայմանագիրը) բավարարում է հետևյալ պայմաններին միաժամանակ.

1) Փոխառությունը չի տրամադրվել վճարահաշվարկային կազմակերպության հանդեպ ունեցած որոշակի պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով,

2) Փոխառությունը ներգրավված է Հայաստանի Հանրապետության դրամով կամ առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով: Սույն կանոնակարգում «արտարժույթի առաջին խումբ» հասկացությունը կիրառվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ սահմանված նշանակությամբ,

3) Վճարահաշվարկային կազմակերպության լուծարման դեպքում փոխատուի պահանջները (այդ թվում՝ տոկոսների գծով) ենթակա են բավարարման վճարահաշվարկային կազմակերպության մյուս բոլոր պարտատերերի պահանջները բավարարվելուց հետո,

4) Փոխառությունն ապահովված չէ վճարահաշվարկային կազմակերպության կամ վճարահաշվարկային կազմակերպության հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, կամ փոխատուն ավելի բարենպաստ կարգավիճակում չի հայտնվում այն բանի արդյունքում, որ նրա պահանջը ենթակա է բավարարման ավելի շուտ, քան վճարահաշվարկային կազմակերպության լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում՝ փոխատուի պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) փոխատուի՝ վճարահաշվարկային կազմակերպության հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ,

5) Փոխառությունը տրամադրվել է առնվազն 5 տարի ժամկետով,

6) Փոխառության պայմանագիրը չի պարունակում այնպիսի դրույթներ (խթաններ), որոնք տնտեսապես կամ այլ կերպ կարող են ստիպել (խթանել) վճարահաշվարկային կազմակերպությանը ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակիորեն մարել փոխառության գումարը,

7) Փոխառությունը (մայր գումարը և տոկոսները) ժամկետից շուտ մարման ենթակա չէ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

8) Պայմանագրի համաձայն՝ փոխառությունը (մայր գումարը կամ տոկոսները) ենթակա չէ մարման վճարահաշվարկային կազմակերպության կողմից, եթե փոխառության գումարի կամ դրա գծով տոկոսների մարումը վճարման օրվա դրությամբ կհանգեցնի վճարահաշվարկային կազմակերպության տնտեսական նորմատիվների խախտմանը: Ընդ որում՝ վճարահաշվարկային կազմակերպության և փոխատուի միջև որևէ պայմանագրով կամ վճարահաշվարկային կազմակերպության ներքին կամ անհատական իրավական ակտով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում վճարահաշվարկային կազմակերպության համար փոխառության գումարի կամ դրա գծով տոկոսների ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունք տրամադրել փոխատուին, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է վճարահաշվարկային կազմակերպության կողմից թողարկված բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը կամ վճարահաշվարկային կազմակերպության երկրորդ մակարդակի կապիտալ հաշվարկում ընդգրկվող այլ ստորադաս փոխառությունների գծով վճարումների իրականացմանը,

9) Սույն հավելվածի 8-րդ ենթակետում նշված դեպքում փոխառության մայր գումարի կամ տոկոսների մասնակի կամ ամբողջական չվճարումը չի հանդիսանում վճարահաշվարկային կազմակերպության կողմից պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում,

10) Փոխառության գծով վճարման ենթակա տոկոսների մեծությունը չի կարող կախվածության մեջ դրվել վճարահաշվարկային կազմակերպության վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ փոխառության գծով կատարված մայր գումարի կամ տոկոսների փաստացի վճարումների մակարդակից: Փոխառության գծով վճարման ենթակա տոկոսների չափը չի կարող նվազել այն դեպքում, երբ փոխառության գծով սահմանված վճարումները վճարահաշվարկային կազմակերպությունը կատարում է ամբողջությամբ և ժամանակին,

11) Որևէ իրավական փաստաթղթով սահմանված չէ փոխատուի համար իրավունք՝ ժամկետից շուտ պահանջելու փոխառության գումարը միայն այն հիմքով, որ վճարահաշվարկային կազմակերպությունը պատշաճ կերպով չի կատարել այլ պարտավորությունների գծով իր ստանձնած պարտավորությունները,

12) Փոխառությունը չի տրամադրվել այնպիսի իրավաբանական անձի կողմից, որում վճարահաշվարկային կազմակերպությունը հանդիսանում է նշանակալից մասնակից, կամ վճարահաշվարկային կազմակերպությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ֆինանսավորել այդ փոխառության ներգրավումը,

13) Որևէ իրավական փաստաթղթով սահմանված չէ, որ փոխատուն կարող է որևէ կերպ սահմանափակել կամ խոչընդոտել վճարահաշվարկային կազմակերպությանն այլ փոխատուներից նոր փոխառությունների ներգրավման հարցում,

14) Փոխառության գծով վճարվող գումարների վճարման ժամանակացույցը հստակ նշված է փոխառության պայմանագրում,

15) Այն դեպքում, երբ փոխառության գումարը վճարահաշվարկային կազմակերպությանը տրամադրվում է փուլերով (տրանշերով), ապա երկրորդ մակարդակի կապիտալի հաշվարկում ընդգրկվելու նպատակով յուրաքանչյուր այդպիսի փուլ (տրանշ) պետք է բավարարի սույն հավելվածով սահմանված բոլոր պայմաններին, այդ թվում՝ յուրաքանչյուր փուլ պետք է տրամադրվի առնվազն 5 տարի ժամկետով:

2. Վճարահաշվարկային կազմակերպության կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները երկրորդ մակարդակի կապիտալի կազմում ներառելիս օրական ամորտիզացվում են՝ սկսած դրանց մարման օրվան նախորդող հինգերորդ տարվա առաջին օրվանից, և վճարահաշվարկային կազմակերպության երկրորդ մակարդակի կապիտալի կազմում ներառվող ստորադաս փոխառության չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$SL_c = \frac{SL}{CD} * RD,$$

Որտեղ՝

SL_c – ստորադաս փոխառության՝ երկրորդ մակարդակի կապիտալի կազմում ներառման ենթակա չափն է,

SL – ստորադաս փոխառության մայր գումարն է՝ մարման օրվան նախորդող 5-րդ տարվա առաջին օրվա դրությամբ,

CD – մարման օրվան նախորդող 5-րդ տարվա առաջին օրվանից մինչև մարման օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի քանակն է,

RD – տվյալ օրվա դրությամբ՝ ստորադաս փոխառության մինչև մարում մնացած օրերի քանակն է:»:

13 հունվարի 2026 թվականի թիվ 6-Ն

*Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը, տրամադրման կարգը և ժամկետները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 263-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին **

Նպատակ ունենալով ներդնել վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման առցանց համակարգ և սահմանել այդ համակարգով հաշվետվությունների ներկայացման առավել մանրամասն կանոններ,

հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը և 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության տրամադրման կարգը և ժամկետները»՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվության ձևը»՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 102 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 263-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 2-ին: (Հավելվածները տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/file_manager/Decision-Appendix/2026/Appendix_6N_13.01.2026_arm.pdf):

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2026 թ. հունվարի 13-ին (ՀՀԳՏ, 30.01.2026):

22 հունվարի 2026 թվականի թիվ 11-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին *

Նպատակ ունենալով սահմանել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման բարձր և ցածր ռիսկի չափանիշների ցանկը,

հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 279-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 21-րդ կետից հանել «Ռիսկի չափանիշները սահմանվում են Օրենքով, սույն կանոնակարգով և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:» բառերը:

2) Որոշման 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27. Բարձր ռիսկի չափանիշներ են.

1) իրավաբանական անձինք կամ կազմավորումները, որոնց գործունեության ոլորտը ակտիվների անհատական տնօրինումն է,

2) անվանական բաժնետերեր կամ ըստ ներկայացնողի բաժնետոմսեր ունեցող ընկերությունները,

3) կանխիկի լայնամասշտաբ կիրառությամբ բնութագրվող բիզնեսները և գործարար հարաբերությունները,

4) սեփականատերերի արտասովոր կամ անհարկի բարդ կազմ ունեցող ընկերությունները,

5) անհատականացված բանկային ծառայությունների մատուցումը,

6) առանց առերես շփման գործարքը կամ գործարար հարաբերությունը,

7) քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները,

8) կյանքի ապահովագրության վկայագրերի շահառուները,

9) անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են,

10) բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2026 թ. հունվարի 22-ին (ՀՀԳՏ, 29.01.2026):

11) անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:»:

3) Որոշման 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«28. Ցածր ռիսկի չափանիշներ են.

1) կյանքի ապահովագրության պայմանագրերը, որոնց դեպքում տարեկան ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկը կամ միանվագ ապահովագրավճարը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը,

2) կենսաթոշակային համակարգերի շրջանակում կնքված ապահովագրական պայմանագրերը, եթե դրանք չեն պարունակում հրաժարման մասին դրույթ, և պայմանագիրը չի կարող օգտագործվել որպես գրավի առարկա,

3) Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքի բյուջե կատարվող վճարումները,

4) հանրային ծառայությունների դիմաց կատարվող վճարումները,

5) աշխատավարձի, կենսաթոշակի կամ հայտնի աղբյուրներից ստացվող սոցիալական նպաստների հետ կապված վճարումները,

6) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,

7) պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, համայնքային կառավարչական հիմնարկները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 30-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

26 հունվարի 2026 թվականի թիվ 12-Ն

«Կրիպտոակտիվներով կնքված գործարքների վերաբերյալ գրանցումների կամ գրառումների կատարման, պահպանման (արխիվացման) և դրանց բովանդակության նկատմամբ պահանջները, ինչպես նաև դրանք Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը» սահմանելու մասին *

Նպատակ ունենալով անցումային փուլում ապահովել կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող սուբյեկտների կողմից կնքվող գործարքների վերաբերյալ պատշաճ տվյալների գրանցումը և պահպանումը, ինչպես նաև ստանալ ամբողջական, համադրելի և ժամանակին տեղեկատվություն կրիպտոակտիվներով կնքված գործարքների վերաբերյալ՝ կրիպտոակտիվներով մատուցվող ծառայությունների նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար,

հիմք ընդունելով «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 94-րդ հոդվածի 2.2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Սահմանել «Կրիպտոակտիվներով կնքված գործարքների վերաբերյալ գրանցումների կամ գրառումների կատարման, պահպանման (արխիվացման) և դրանց բովանդակության նկատմամբ պահանջները, ինչպես նաև դրանք Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը» կարգը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: Սույն որոշման Հավելվածով հաստատված կարգի Բաժին 3-ով սահմանված հաշվետվությունն առաջին անգամ ներկայացնելիս Հաշվետվության մեջ ներառվում են «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 94-րդ հոդվածի 2.1-ին մասով սահմանված Ցանկում ներառվելու օրվանից իրականացված գրանցումների կամ գրառումների վերաբերյալ տեղեկությունները:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2026 թ. հունվարի 26-ին (ՀՀԳՏ, 29.01.2026):

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2026 թվականի հունվարի 26-ի թիվ 12-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

Ծառայություններ մատուցող անձի անվանումը .....
Հաշվետվության ներկայացման ամսաթիվը .....

N	Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի կնքման ժամը	Կրիպտոակտիվներով ծառայության տեսակը	Գործարքի տեսակը	Կրիպտոակտիվի անվանումը	Կրիպտոակտիվի ընդհանուր քանակը	Գործարքի ընդհանուր ծավալը	Գործարքի արժույթի ISO կոդը	Կանխիկ/անկանխիկ	Գործարքի նույնականացուցիչ համարը	Հաճախորդին նույնականացնող համարը	Հաճախորդի ռեզիդենտությունը
1												
2												
3												
...												

Հավաստիացնում եմ, որ աղյուսակ 1-ում լրացված տեղեկությունները արժանահավատ են և ամբողջական:

Ղեկավարի ստորագրություն _____

26 հունվարի 2026 թվականի թիվ 13-Ն

Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2025 թվականի չորրորդ եռամսյակ) *

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ սահմանելով ռիսկով կշռված ակտիվների 1.75%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2026 թ. հունվարի 26-ին (ՀՀԳՏ, 29.01.2026):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2026)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-592
Էլփոստ՝ statistics@cba.am

